Azg
Azg armenian daily

9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1998 ՈՒՐԲԱԹ #188 (1691)

Զինված բախում Իրանի եւ Աֆղանստանի սահմանում

ԹԵՀՐԱՆ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Այսօր Իրանի Իսլամական Հանրապետության եւ Աֆղանստանի սահմանում տեղի է ունեցել զինված բախում աֆղանական «Թալիբան» շարժման ջոկատների ու Իրանի «Իսլամական հեղափոխության պահապանների» կորպուսի ստորաբաժանման միջեւ: Ինչպես հաղորդում է Թեհրանի ռադիոն, ընդհարումը նախաձեռնել են թալիբները, որոնք ծանր զենից կրակ են բացել Իրանի սահմանային պահակակետի վրա՝ երկրի հյուսիսային մասում գտնվող Խորասանի նահանգի Սալեհ Աբադի շրջանում: Այս տարվա օգոստոսից ի վեր Աֆղանստանի հետ սահմանում տեղակայված Իրանի բանակի ընտիր զորամասերը պատասխան կրակով ստիպել են թալիբներին նահանջել:

ՆԱՏՕ-ն կարող է ներխուժել Հարավսլավիա առանց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թույլտվության

ԼՈՆԴՈՆ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՆԱՏՕ-ի անդամ երկրները համաձայն են, որ իրենց ռազմական ուժը կարող է ներխուժել Հարավսլավիա առանց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թույլտվության: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այդ մասին հայտարարել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան՝ այսօր լոնդոնյան «Ֆայնենշլ թայմզ» թերթում հրապարակված հարցազրույցում: Նա ընդգծել է, որ առաջիկա մի քանի օրվա ընթացքում զինվորականներին կարող են համապատասխան հրամաններ տրվել:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

ՆԳ եւ ԱԱ նախարարությունները պետք է առանձնացվեն

Փաստարկում է երկրապահ Ալբերտ Բազեյանը

ՆԱԻԻՆԵ ԳԻԼԱՐՅԱՆ



«Երկրապահ» պատգամավորական խմբի առաջին նախագահ Ալբերտ Բազեյանը, որը իշխանափոխությունից հետո ընտրվեց ԱԺ փոխխոսնակ, չորեքշաբթի բարձրացրեց իր հրաժարականի հարցը: Հրաժարականն անակնկալ չէր ներքաղաքական զարգացումների տեսանկյունից, «Երկրապահ»-գործադիր իշխանություն եւ հատկապես «Երկրապահ»-նախագահ հարաբերությունները սրորջյա խութերի են բախվում: Առաջին խութը կառավարության տնտեսական քաղաքականությունն է՝ հատկապես սեփականաշնորհման ոլորտում, երկրորդը, որ թերեւս առավել էական է, երկրապահների դժգոհությունն է իրավապահ մարմինների գործունեությունից եւ ՆԳ, ԱԱ նախարարության հետ ծագած պրոբլեմները: Անցումային շրջանում գտնվող մեր պետության համար ուժային նախարարությունների կողմնորոշումը նախագահի [illegible] հանդիպ միտ վնոր որ է եղել: Վանո Սիրադեղյանի ՆԳ նախարար լինելու օրոք այս երեւույթը դասական ձեւակերպում ստացավ: Այսօր հարաբերությունների նման մոդելը փոխանցվել է Սերժ Սարգսյանին, եւ երկրի ու նախագահի կայունության համար սկզբունքային է պատասխանատվության նախարարի ու ՆԳ, ԱԱ նախարարի փոխըմբռնումը: Ալբերտ Բազեյանը ներկայացրեց իր հրաժարականը պատճառաբանելով խորհրդարանում սկսված քաղաքական խաղերին չմասնակցելու իր անձնական դիրքորոշումը: «Ազգը» առաջարկեց մանրամասնել հրաժարականից առաջ եւ հատկապես դրանից հետո կատարված եւ կատարվելիք քայլերը:

Տես էջ 2

ԲԱԲՈՒ

Հ. Ալիեւ. «Ես կընտրվեմ նախագահ, եւ մեք կրկին կհանդիպենք Լաչինում եւ Շուշիում»

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Այսօր արդեն լուրեր են տարածվում, թե Ալիեւը փոփոխություններ է անելու Սահմանադրության մեջ, որպեսզի իրավունք ունենա մասնակցելու նաեւ 2003 թ. նախագահական ընտրություններին, տեղեկացնում է «Ազատություն» ռադիոկայանը: Դատելով Ադրբեջանում անցկացված հասարակական կարծիքի ուսումնասիրությունների արդյունքներով՝ այսօր Ադրբեջանում Ալիեւը լուրջ հակառակորդ չունի: Ընդդիմադիր թեկնածուներից նրա համար ամենավտանգավորը է. Մամեդովն է, որը, նույն այդ ուսումնասիրություններով, վայելում է բնակչության 16 տոկոսի համակրանքը: Մյուս 4 թեկնածուները լավագույն դեպքում կարող են ստանալ քվեների 1-8 տոկոսը, այնինչ Ալիեւի օգտին քվեարկելու է 69 տոկոսը:

Ընտրություններից 5 օր առաջ 26 կուսակցություններից ու 40 հասարակական կազմակերպություններից կազմված ընդդիմությունը պահանջում է ընտրությունները հետաձգել 3 ամսով: Գրանցված թեկնածուներից միայն մեկը՝ Աշրաֆ Մեհդիեւն է համակարծիք այդ պահանջին եւ կոչ է անում բնակչությանը ընտրությունների օրը նշանավորել նստացույցերով ու խաղաղասիրական անհնազանդության ակցիաներով:

«Դուք իրավացի եք, երբ ասում եք, որ միայն փորձառու եւ ինձ պես իմաստուն մարդը կարող է ղեկավարել երկիրը, լուծել մեր առջեւ ծառացած խնդիրները եւ վերադարձնել գրավված տարածքները», ասել է Ալիեւը Տեբրաիլի շրջանի փախստականների հետ հանդիպման ժամանակ: «Ալլահի օգնությամբ ես կընտրվեմ նախագահ, ես կվերադարձնեմ մեր հողերը եւ մենք կրկին կհանդիպենք Տեբրաիլում, Խոջալուում, Լաչինում եւ Շուշիում: Նայեք ձեր շուրջը՝ ամեն բան, ինչ տեսնում եք, ես եմ կառուցել 70-80-90-ական թթ.-ին: Սրանք իմ հնարավորությունների արդյունքներն են: Ես միշտ էլ մտածել եմ իմ ժողովրդի մասին եւ ժողովուրդն էլ ինձ չի մոռանա»:

Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, Ադրբեջանում նախագահական ընտրությունների ընթացքին հետեւելու են ավելի քան 200 միջազգային դիտորդներ, որոնք շրջում են երկրում, զրուցում մարդկանց հետ: Նրանց հավաստմամբ, ամենուր մարդիկ երկնքին նայելով ասում են, որ իրենց սիրտն ու ձայնը տալու են «համաշխարհային մակարդակի պետական գործիչ Հեյդար Ալիեւին»:

Հայաստանը ստորագրեց համաձայնագիր ամերիկյան խոշոր ընկերությունների հետ

Հոկտեմբերի 7-ին Վաշինգտոնում բացվել է Հայաստանի էներգետիկ համակարգին նվիրված խորհրդաժողով, որին մասնակցում են ավելի քան 70 ամերիկյան եւ միջազգային ընկերություններ:

Ինչպես հաղորդում են վարչապետի մամուլի ծառայությունից, խորհրդաժողովում Հայաստանի տնտեսության մասին ելույթ է ունեցել վարչապետ Արմեն Դարբինյանը:

Էներգետիկ համաժողովի առաջին իսկ օրը, ՀՀ կառավարության ներկայացուցիչները համագործակցության կոնկրետ հուշագրեր են ստորագրել մի շարք խոշոր ամերիկյան ընկերությունների հետ: Ստորագրվեց մեմորանդում «Արիալ Ինթերնեյշնլ» կորպորացիայի հետ՝ Աբովյանի գազի պահեստարանի ընդլայնման եւ վերագործարկման, «Սաուդերն Քալիֆորնիա էդիսոն» ընկերության հետ էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի տնտեսական շահավետության բարձրացման միջոցառումների իրականացման, Հայ-ամերիկյան որոնողական ընկերության հետ՝ Գառնու շրջակայքում նավթի եւ գազի որոնողական առաջին հորատման արդյունքների ամփոփման եւ երկրորդ հորատման տեղի ու ժամկետների սահմանման համաձայնագիր: «Այ-բի-էմ» ընկերության հետ՝ «Տրանզիստոր» գործարանի բազայի վրա միկրոսխեմաների արտադրության կազմակերպման մասին:

Համաժողովը կազմակերպել են Հայաստանի կառավարությունը եւ ԱՄՆ էներգետիկ ասոցիացիան: Ֆինանսավորել է Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալությունը:

ԼՈԲԲԻԻՆԳ

ՈԱԿ Հայ ազգային դաշինքը Չիկագոյում մեծարեց կոնգրեսական Բենջամին Գիլմանին

«Ես ձգտում եմ, որ Սոֆիակ տուն գագաթաժողովի հրավիրվեն Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի նախագահները եւ փորձ արվի՝ կովկասյան հիմնահարցը դուրս բերել փակուղուց», դահլիճում արձագանքում է պատվարժան Բենջամին Գիլմանի ձայնը: Հոկտեմբերի 3-ին Չիկագոյում ՀԲԸՄ Օնիկ Նորհաս կենտրոնում մեծարվում էր Միացյալ Նահանգների Կոնգրեսի միջազգային հարաբերությունների կոմիտեի նախագահ Գիլմանը, որի պատվին կազմակերպված հանդիսավոր ճաշկերույթը համընկավ Հայաստանի անկախության 7-րդ տարեդարձի հետ: Արարողությունը կազմակերպել էր Ամերիկայի Հայ ազգային դաշինքը (Armenian National Alliance)

Ընդունելությանը հրավիրվածներն ականատես եղան մի քանի ուրախալի իրողության. նախ հրավիրվածների մեջ մեծ թիվ էին կազմում երիտասարդները, որոնք ըստ ակտիվ էին, երկրորդը՝ Հայաստանի անկախության 7-րդ տարեդարձին ավելացավ նաեւ Կոնգրեսում 907 բանաձեւի պահպանման ուրախությունը, եւ երրորդը՝ ակնհայտ էր, որ իրականություն է դարձել այն, ինչի մասին ըստ երկար երազել ենք. հայկական տարբեր քաղաքական հոսանքների ներկայացուցիչները, մոռացած իրենց տարաձայնությունները, հանդես էին գալիս մեկ ընդհանուր պահանջով: Վաշինգտոնից հատուկ Հայ ազգային դաշինքի կազմակերպած արարողությանը մասնակցելու համար հրավիրել էին Ամերիկայի հայկական համագումարի եւ Հայ ազգային կոմիտեի (ՀՅԴ) գործադիր տնօրենները: Արարողության ճաշակով ձեւավորված ծրագիրը պարունակում էր շնորհավորական նամակներ Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանից, Վաշինգտոնում Հայաստանի դեսպան Ռուբեն Շուգարյանից, Հայկական համագումարի ներկայացուցիչներ Հրայր Հովնանյանից եւ Վան Գրիգորյանից, Իլինոյսի նահանգապետ Ջիմ Էդգարից եւ Ռամկավար Ազատական կուսակցության կենտրոնական վարչության ատենապետ Հայկաշեն Ուզունյանից:

Արարողությանը ներկա էին Ամերիկայի Արեւելյան թեմի առաջնորդ Արբազան Խաժակ արք. Պարսամյանը, Թեհրանի մշակութային միության կենտրոնական վարչության ատենապետ Վարդես Պալյանն ու կինը՝ Ռիթա Պալյանը, Երեւանի պետական համալսարանի բարեկամների ֆոնդի գանձապետ Հովսեփ Սարաֆյանն ու կինը՝ Նաղյա Սարաֆյանը, ՀԲԸՄ-ի Ալեֆ եւ Մարի Մանուկյաններին ավան դպրոցի տնօրենը: Դեթրոյթից ժամանել էր ՈԱԿ մամուլի դիվանի տնօրեն Երվանդ Ազատյանը: Հայտնի բարեգործ Անդի Աթենսն ու կինը ներկայացնում էին Չիկագոյի եւ ողջ հունական սփյուռքը:

Տես էջ 3

Սկսվում է հերթական զորակոչը

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը հոկտեմբերի 7-ին հրամանագիր է ստորագրել «1998 թվականի աշնանային զորակոչ անցկացնելու եւ զորացրում կատարելու մասին»:

1998 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացվելու է արտակարգ տեսակի այն հաղթահարների ժամկետային զինվորական ծառայության աշնանային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչեւ զորակոչի օրը, ինչպես նաեւ այն հաղթահարների, որոնք կորցրել են նախկինում ստացած ժամկետային զինվորական ծառայությունից տարկետման իրավունքը:

Հրամանագրով նախատեսվում է նաեւ 1998 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին զորացրել ստիպողական ժամկետում ժամկետային զինվորական ծառայությունն անցած զինծառայողներին:

ՀՅ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՍՄԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Թուրք-սիրիական լարվածությունը վերածվում է աղակայունացման մշտական գործոնի

ՎԱՀԱՆ ՕՍԱՆՅԱՆ

Թուրքիան տարածաշրջանի երկրներից օտարման գնով հետեւողականորեն սրում էր Սիրիայի հետ իր հարաբերությունների լարվածությունը: Դեռ ավելին, Մեջլիսը, ըստ «Սաբահի», պատրաստվում էր Սիրիայի դեմ ռազմական գործողությունների դիմելու արտոնություն տալ Յելմազի կառավարությանը: Արտոնության հարցը անորոշ ժամանակով հետաձգվեց: Բայց հոկտեմբերի 7-ին Մեջլիսը ճնշարկեց Սիրիայի հարցը: Թեեւ նիստը դռնփակ էր, այնուամենայնիվ, թուրքական հեռուստատեսությունը դրա մասին որոշակի տեղեկություններ հաղորդեց: Ըստ այդ տեղեկությունների, թուրքական կառավարության գործունեությունը թուրք-սիրիական լարվածության հարցում արժանացել է պատգամավորների միահամուռ հավանությանը եւ Մեջլիսը պաշտոնական հայտարարությամբ դատապարտել է Սիրիային, սատարելու համար PKK-ի ահաբեկչությանն ընդդեմ Թուրքիայի:

Հատկանշական է, որ այդ նիստում, բացի Սիրիայից, Հյուսիսային Իրաքում քրդական ինքնավարության ստեղծման ձեռնարկումների համար խստագույնս դատապարտվել է նաեւ Միացյալ Նահանգները: Վերջինիս դատապարտելու նախաձեռնությունը վերցրել են Չախ ժողովրդավարական կուսակցության նախագահ, փոխվարչապետ Բյուլենթ Էջեւիթը եւ «ճշմարիտ ուղի» կուսակցության նախագահ Թանսու Չիլլերը: Էջեւիթն իր մտահոգությունն է հայտնել քրդական ինքնավարության ամերիկյան ձեռնարկումների առթիվ, իսկ Չիլլերն ընդգծելով, թե Ս. Նահանգները կրակի հետ է խաղում, վճռականորեն հայտարարել է. «Թուրքիան չի կարող հանդուրժել քրդական որեւէ ինքնավարության ստեղծում»:

Տվյալ դեպքում մտահոգության աղբյուրը ոչ այնքան քրդական ինքնավարությունն է, որքան Հյուսիսային Իրաքի քուրդ առաջնորդներ Ջալալ Թալաբանիի եւ Մասուդ Բարզանիի հետ բանակցություններում Թուրքիայի դերի կտրուկ նվազումը:

Տես էջ 8

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊՈՊԱԳԻԿ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

ՆԳ եւ ԱԱ նախարարությունները պետք է առանձնացվեն

Սկիզբը էջ 1

– Պրն Բազեյան, ձեր հրաժարականը չե՞ք համարում պարտվողական քայլ կամ գուցե ինքնամեկուսացում Ազգային ժողով եւ գործադիր իշխանություն հարաբերությունների գերլարման այս փուլում:

– Ես իմ հրաժարականի հարցը չեմ համարում պարտվողական քայլ: Վարդնելով ԱԺ փոխխոսնակի պաշտոնը ես շարունակելու եմ պատգամավորական գործունեությունն ԱԺ-ում, «Երկրապահ» պատգամավորական խմբում եւ Երկրապահ կամավորական միությունում: Ինչպես տեսնում եք, հանգիստ խղճով եկել եմ աշխատանքի եւ կաշխատեմ այնքան ժամանակ, մինչեւ ընտրվի նոր ԱԺ-ը: Իսկ ԱԺ եւ գործադիր իշխանություն հարաբերություններում, համաձայն եմ, խնդիրներ կան, եւ «Երկրապահը», կարծում եմ, պետք է սկզբունքորեն գործի: Մենք չենք ողջունում կառավարության գործելակերպը, մասնավորապես լուրջ խնդիր կա ԱԺ-ի հանդեպ գործադիր իշխանության ցուցաբերած մոտեցումների առումով: Ես՝ որպես այս մարմնի ղեկավարներից մեկը, պետք է մտահոգվեի այդ հարցով: Համոզված եմ, չի կարելի արժեզրկել ամբողջ ԱԺ-ն՝ որպես պետական օրենսդիր մարմին: Եթե կան առանձին պատգամավորներ, որոնց պետք է պատասխանատվության ենթարկել, ապա նրանց հանդեպ ունեցած վերաբերմունքը ճիշտ չեմ համարում ամբողջ ԱԺ-ի վրա տարածելը: Ցավոք սրտի, այս առումով հանրապետության նախագահը եւս կարեւորություն չի տալիս ԱԺ-ի մասնակցությանը պետական քաղաքականության խնդիրներին: Բայց ԱԺ-ն քաղաքական, ներկայացուցչական եւ օրենսդիր մարմին է, որտեղ պետք է քննարկվեն պետական քաղաքականության բոլոր հարցերը: Ճիշտ է, հատկապես վերջերս՝ 8-րդ նստաշրջանի սկզբում, ԱԺ-ում սկսվել են քաղաքական շահարկումներ, դրվում է իշխանության պայքարի խնդիրը:

– Բայց իշխանության համար պայքարն ինքնին բացասական կամ դատապարտելի երեւույթ չէ, դա կուսակցությունների բնական գործելակերպն է:

– Իշխանության համար պայքարը պետք է մղվի ազնվորեն՝ առանց շահարկումների եւ ձեւական պատճառաբանությունների: Վերադառնալով ձեր ասած պարտվողականությանը, նշեմ, որ «Երկրապահը» կառաջադրի փոխխոսնակի պաշտոնի իր թեկնածուին, եւ որեւէ խանգարիչ հանգամանք այստեղ չկա: ԱԺ կանոնակարգով հստակ նշված չէ, թե խմբերը եւ խմբակցությունները ինչ համամասնությամբ պետք է խորհրդարանի ղեկավար կազմում պաշտոններ ունենան: Կարծում եմ՝ «Երկրապահին» իր թվակազմին համեմատ ներկայացված չէ ԱԺ ղեկավարության մեջ: Այժմ մենք ունենք մեկ փոխնախագահ եւ հանձնաժողովի երկու նախագահ, որոնցից մեկը՝ Գեղամ Ղարիբջանյանը՝ առողջապահության, բնապահպանության եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը, շուտով տեղափոխվելու է այլ պաշտոնի, ուստի «Երկրապահը» կառաջադրի փոխնախագահի իր նոր թեկնածուին:

– Չե՞ք կարծում, որ խորհրդարանական ընդդիմությունն ԱԺ-ում ձեւավորել է կայուն շարքեր՝ 71 ձայն, ուստի նախագահի եւ կառավարության հենարան հանդիսացող «Երկրապահի» համար ավելի ու ավելի դժվար է լինելու կանխորոշել քվեարկության արդյունքները: Հիշենք, որ կառավարությունը շուտով բերելու է նոր բյուջեի նախագիծը, որին անհրաժեշտ է 96 ձայն, ապա քվեարկության է դրվելու ընտրական օրենսգիրքը:

– Այդ 71 թիվը հստակ եւ կայուն թիվ չէ: Որպես ընդդիմություն չհաշվենք նրանց, որովհետեւ այդ 71-ում կան որոշ թվով երկրապահներ: Մենք միանշանակ չէ, որ պաշտպանում էինք սեփականաշնորհման այդ գործարքները: «Երկրապահը» գտնում է, որ կառավարությունն այս հարցերում ունի թերացումներ: Բայց եթե հարցը դրվում է քաղաքական հարթության վրա, ապա քաղաքական առումով, ես գտնում եմ՝ «Երկրապահ» պատգամավորական խումբը նպաստակահարմար է, որ այսօր հնարավորություն չտա ընդդիմությանը հաջորդ քայլն անելու: Չարժե այսօր այդպիսի հնարավորություն ստեղծել, որպեսզի բարձրացվի կառավարության անվստահության հարցը, իսկ հետո նախագահի հրաժարականի խնդիրը: Հիշենք՝ Ադրբեջանում նախագահական ընտրություններ են: Ըստ ամենայնի, Ալիեւը կվերընտրվի, իսկ դրանից հետո դարձյալ կբարձրանա բանակցությունների վերսկսման խնդիրը: Մեզ պետք է կայունություն: Ես ինքնակումները քաղաքական առումով ես նորմալ եմ գնահատում, բայց պետք չէ սրել հարաբերությունները եւ միանգամից դնել իշխանափոխության հարց՝ ընդհուպ մինչեւ նախագահի հրաժարականը: Անընդհատ չստեղծենք այնպիսի մի հանրապետության իմիջ, որտեղ պերմանենտ արտահերթ ընտրություններ են՝ նախագահական, խորհրդարանական, դա բնավ ձեռնտու չէ:

– Ձեզ չի՞ թվում, որ ԱԺ-ի կողմից հարաբերությունների կարծրացումն արդյունք է հանրապետության նախագահի եւ կառավարության ընդհանուր բացասական վերաբերմունքի, երբ փորձ է կատարվում ԱԺ աշխատանքը բնորոշել իբրեւ անհեթեթ, եւ նրան մասնակից չդարձնել պետական քաղաքականության մշակմանը:

– Գուցե, այդ վերաբերմունքն ինչ-որ առումով համարժեք է: Եթե մեզ չհաջողվեց մեր պատգամավորական խմբի բոլոր անդամներին փաստացի բերել մեկ համոզման եւ այդ պատճառով «Երկրապահը» գնաց բաց քվեարկության, այսինքն՝ յուրաքանչյուրը քվեարկեց ըստ իր կամքի, մենք չփորձեցինք ճնշում գործադրել պատգամավորների դիրքորոշումների վրա, ապա նշանակում է, որ տարաձայնություններ իրոք կան: Բայց ելույթ ունեցողները հիմնականում, բնականաբար, փորձեցին պաշտպանել կառավարության դիրքորոշումը: Ինչպես ժողովուրդն է ասում, ավելի գրական ձեւակերպմամբ՝ ավանակ նստելը մի արտ է, ավանակից իջնելը՝ երկու:

– Իսկ «Երկրապահը» պատրաստվո՞ւմ է իր տարակարծությունները քննարկել նախագահի հետ, եւ զուգահեռաբար Ձեր հրաժարականին ինչպե՞ս կվերաբերվի Վազգեն Սարգսյանը:

– Հանրապետության նախագահն ինքն է որոշում՝ ում հետ հանդիպել եւ ինչ քննարկել: Հրաժարականից հետո ինձ տեղեկացրին, որ նա ուզում է զրուցել, ես զանգահարեցի եւ մենք կարճ հեռախոսազրույց ունեցանք, որի ընթացքում ես փորձեցի բացատրել, որ իմ հրաժարականի պատճառը քաղաքական չէ, անձնական մոտեցումների արդյունք է: Այդ պատճառով էլ չի քննարկվել ոչ ԵԿՄ վարչությունում, ոչ էլ պատգամավորական խմբում: Վազգեն Սարգսյանն այսօր է վերադարձել Երեւան: Մենք դեռ չենք հանդիպել: Կարծում եմ, նա բացասական կգնահատի իմ քայլը, կփորձի համոզել, բայց...

– «Երկրապահի» պատգամավորները սեփականաշնորհման հետ կապված ելույթներում քննադատեցին նաեւ իրավապահ մարմինների աշխատանքը, ճի՞շտ են այն լուրերը, ըստ որի ՆԳ եւ ԱԱ նախարարության եւ «Երկրապահի» միջեւ խնդիրներ են ծագում, որի արդյունքում էլ՝ խուզարկություններ եւ հրեական մեղադրանքների փորձեր են կատարվում:

– Հակոբ Հակոբյանի տան խուզարկության վերաբերյալ մեր խումբն ԱԺ-ում հայտարարություններ արել է: Լուրեր կան, թե փորձել են խուզարկել նաեւ իմ բնակարանը: Բայց դա բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Ի վերջո, իմ տանը բան էլ չկա սուզելու (ծիծաղում է): Ինչ վերաբերում է իրավապահ մարմինների գործունեությանը, ապա քաղաքացիների դիմում-բողոքների զգալի մասը վերաբերում է իրավապահ մարմինների գործելակերպին: Իրավապահ մարմինները չարաշահում են իրենց լիազորությունները:

– Դուք օրենսդրական լուծում տեսնո՞ւմ եք Մեծ Սարգսյանի ղեկավարած ոլորտում բարեփոխում կատարելու առումով:

– ԱԺ ներկայացվել է օրինագիծ, ըստ որի՝ պետք է առանձնացնել ներքին գործերը եւ ազգային անվտանգությունը: Դա էլ կնշանակի հարցին օրենսդրական լուծում տալ:

Արձանագրեց ՀՀ նախագահին առընթեր վերահսկողական ծառայության պետ Դավիթ Վարդանյանը «Գերագույն վերահսկիչ ատյանները եւ դրանց փոխհարաբերությունները օրենսդիր եւ գործադիր իշխանության մարմինների հետ» միջազգային գիտաժողովում, որ կազմակերպել էր ՄԱԿ-ի ԶԾ հայաստանյան գրասենյակն ու ԱԺ Վերահսկիչ պալատը: Դավիթ Վարդանյանը՝ իբրեւ ընդդիմադիր քաղաքական գործչի հարուստ փորձ ունեցող նորընծա պատգամավոր, հավաստեց, որ Հայաստանը դեռեւս անցումային փուլում է, եւ յուրաքանչյուր պետական մարմին գործում է ոչ թե օրենքով իր համար սահմանված լիազորությունների շրջանակում, այլ վերցնում է իշխանություն այնքան, որքան կարող է: Իսկ վերահսկիչ կառույցների հայաստանյան ոլորտում խճողված պատկեր է: Պարզ չէ, ո՞ւր կարող են թափանցել վերահսկիչները եւ ի՞նչն է նրանց համար անձեռնմխելի:

ԱԺ Վերահսկիչ պալատի նախագահ Աշոտ Թավադյանը՝ իր ղեկավարած ատյանի օրինակով, մանրամասնեց հսկողական գործունեության ամիլլեսյան գարշադարը: Ողջ հանրապետությունը խոսում է բյուջետային միջոցների, միջազգային վարկերի յուրացումների մասին, իսկ վերահսկողական ծառայություններն անգամ փաստական եզրակացություններ կատարելուց հետո չեն կարողանում որեւէ արդյունքի հասնել: Այսպես՝ Վերահսկիչ պալատի եզրակացություններին պետական մարմինները կարող են չարձագանքել, որովհետեւ ՎՊ-ի մասին օրենքում նման պարտադրանք չկա: ԱԺ մի շարք պատգամավորների օրենսդրական նախաձեռնությամբ Ազգային-իրավական հարցերի մշտական հանձնաժողովն առաջարկում է օրենքում կատարել կարեւոր փոփոխություն. «Աուդիտի արդյունքներին ծանոթանալուց հետո դրան առնչվող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների եւ հիմնարկների ղեկավարները մեկամսյա ժամկետում ՎՊ-ին պաշտոնական տեղեկատվություն են ներկայացնում՝ բացահայտված խախտումները վերացնելու, պետության հասցված վնասը փոխհատուցելու եւ պաշտոնական անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ»:

ԱԺ-ն 8-րդ նստաշրջանում պետք է որ ընդունի այդ փաստաթուղթը: Ինչպես որ ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանը փաստարկեց՝ հանրապետության նախագահին, վարչապետին կից վերահսկողական ծառայություններն ըստ էության անկախ չեն, նրանց պետերին կարող են նշանակել եւ պաշտոնազրկել նախագահն ու վարչապետը, իսկ ԱԺ ՎՊ նախագահին խոսնակը պաշտոնազրկելու հնարավորություն չունի:

Ն. Գ.

ՎԵՐԱՀՍԿԻՉ

Պետական մարմինները վերցնում են իշխանություն այնքան, որքան կարող են

ՏԱՍՏԱՌՈՏ

Ֆրանսիայի դեսպանատան կոմերցիոն կցորդը նշանակվեց Երեւանի կոնյակի գործարանի կոմերցիոն տնօրեն

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Երեւանի կոնյակի գործարանում կոմերցիոն տնօրեն է նշանակվել: Ձեռնարկությունում հայտնեցին, որ հոկտեմբերի 20-ից այդ պաշտոնը կվարի Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության կոմերցիոն կցորդ Սարգիս Տեր-Սահակյանը: Այդպիսի պաշտոն առաջներում գործարանում չի եղել: Հնարավոր է, որ կոմերցիոն տնօրենը կստեղծի նաեւ մարկետինգի եւ գովազդի բաժիններ: Հայտնի է նաեւ, որ նախկին տնօրեն Ալբերտ Հերոյանը այդ ձեռնարկության պետական լինելու ընթացքում բազմիցս հայտարարել է, որ մարկետինգով եւ գովազդով զբաղվելու անհրաժեշտություն բոլորովին չկա:

ԵՐԱԶ-ը կհամագործակցի «Մոսկվիչի» հետ

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՊՏՆԻՊՐԵՍ: ԵՐԱԶ ԲԲԸ-ում ներկայումս թողարկվող մոդելի մեքենան, ի տարբերություն նախկինի, բավականին հարմարավետ է եւ ունի համապատասխան պահանջարկ: Միաժամանակ աշխատանքներ են տարվում մեքենայի դիզայնի եւ որոշ տեխնիկական թերությունների վերացման ուղղությամբ: Ինչպես ասաց ԲԲԸ-ի տնօրեն Համլետ Հարությունյանը, ԵՐԱԶ-ին անհրաժեշտ մեքենամասեր ու հանգույցներ են մատակարարում հանրապետության 6-7 ձեռնարկություններ: Այսօր գործարանն աշխատում է նախկին հզորության 18-20 տոկոսի չափով, պահպանելով աշխատակազմի 50 տոկոսը: Իմիջիայլոց, այստեղ նաեւ կազմակերպվել է ձեռնարկության հին մոդելների նորոգում: Ներկայումս համագործակցության բանակցություններ են ընթանում «Մոսկվիչ» ֆիրմայի հետ: Ծրագրվում է ԵՐԱԶ-ում հիմնել 650 կգ տարողությամբ «Մոսկվիչ» մեքենաների համատեղ արտադրություն ամսական 50 հատ, թողարկել նաեւ այլ մոդելների մարդատար մեքենաներ: Սա լրացուցիչ աշխատատեղերի եւ եկամուտների աղբյուր կհանդիսանա, բայց գործն սկսելու համար կան ֆինանսական դժվարություններ: Ըստ տնօրենի, ԵՐԱԶ գործարանով հետաքրքրվել են նաեւ մի քանի արտասահմանյան մեքենաշինական ֆիրմաներ, սակայն առայժմ զգուշանում են ներդրումներ անել՝ կապված մաքսային եւ հարկային որոշ դժվարությունների հետ:

ԱՆԳՐԱԳԱՐԱՅ

Երկու հիշեցում

Հոկտեմբերի 6-ին լրագրողների հետ հանդիպելիս, նախագահ Ռոբերտ Քոչարյանը, խոսելով ՄԱԿ-ում ունեցած իր ելույթի մասին, ուր, ի պատիվ իրեն, դատապարտել է 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը, ասաց, որ միջազգային հանրության առջեւ այս մասին խոսվեց առաջին անգամ եւ «մենք ուզում ենք 7 տարի»:

Այստեղ ուզում եմ հիշել, որ 1915 թվականի ցեղասպանության դատապարտումը միջազգային հանրության առջեւ առաջին անգամ որպես պետական այր բարձրացրել է անկախ Հայաստանի հանրապետության առաջին արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը 1992 թվականին Ստամբուլում կայացած Սեւծովյան երկրների համագործակցության համաժողովում: Ցեղասպանության հարցի բարձրացումն էլ պատճառ դարձավ Ռաֆֆի Հովհաննիսյանին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ներկայացրած հայտնի հրաժարականի պահանջի, որը ցնծությամբ ընդունվեց Թուրքիայի կառավարության կողմից:

Այսօր ուրախալի է, որ դո՛ւք, մեծարգո նախագահ, հաջություն ունեցաք միջազգային ատյաններում ներկայացնելու հայ ժողովրդի մեծագույն ցավն ու արդար պահանջը:

***

Հոկտեմբերի 6-ին Ազգային ժողովի նիստում պատգամավոր Վանո Սիրադեղյանը, «գուշակելով» Հայաստանի քաղաքական առաջնորդ, ասաց նաեւ, որ գալիք «ընտրություններից հետո, որը համոզված եմ, վստահ եմ, ասածիս պես է լինելու, նախագահի աշխատակազմի ղեկավարի ասած՝ «սուպերնախարար» Վազգեն Սարգսյանից միայն կամուֆլյաժը (ներկաթողարկումը) կմնա, քանի որ նա կգրկվի նաեւ պառլամենտում ունեցած հենարանից, ինչն արդեն նկատվում է»:

Վանո Սիրադեղյանի խոսքը պառլամենտական «Երկրապահ» պատգամավորական խմբի մասին է: Ստիպված եմ հիշեցնել պարոն Վանո Սիրադեղյանին, որ իր վաղեմի բարեկամ եւ ընկեր Վազգեն Սարգսյանը «պառլամենտում ունեցած հենարանով» չէ, որ տիտղոս կամ գնա: Վազգեն Սարգսյանը մեր պետության նորագույն պատմության մեջ մնալու է նախ եւ առաջ որպես նվիրյալ զինվոր, ինչպես նաեւ՝ Հայոց ազգային բանակի ձեւավորման գործում ունեցած իր մեծագույն ծառայությամբ: Բավական է հիշել թեկուզ 1992 թվականի օգոստոսին նրա կոչով կազմված մահապարտների զորագունդը, որը բեկումնային նշանակություն ունեցավ Ղարաբաղյան ճակատում:

ԱՆԱՀՏ ՔՆԱՐՅԱՆ
Քանասեղծուհի

Հոկտեմբերի 9-ին ձրի փոստ

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՊՏՆԻՊՐԵՍ: Հոկտեմբերի 9-ին, միջազգային փոստային միության, որի անդամ է Հայաստանը, օրվա կապակցությամբ Հայաստանից նամակների եւ փոստային բացիկների առաքումը ցանկացած երկիր կլինի անվճար: Այս մասին հայտնեցին ՀՀ փոստի եւ հեռահաղորդակցության նախարարության լրատվական բաժնում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Թող 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային ծառայությունը «Ազգ» թերթի
Տղումը «Ազգին» պարտադիր է
Նյութերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

տեղական

ՆԻԿՈՍԻԱ

Նախագահ Քլերիդեսի մասնակցությամբ նշվեց անկախության տարեդարձը

Ուշացումով սացանք Կիպրոսում Հայաստանի անկախության 7-րդ տարեդարձի տոնակատարությունից այս լուսանկարը: Նախապես հաղորդել էինք, որ անկախության տարեդարձը թեև Հունաստանի մայրաքաղաքում նյութական պատճառներով հնարավոր չէր եղել նշել, սակայն փոքրիկ Կիպրոսի հայկական փոքրիկ գաղութի ջանքերով նշվել էր, այն էլ՝ Կիպրոսի Հանրապետության նախագահ Գլավկոս Քլերիդեսի մասնակցությամբ: Հետաքրքրական է նշել, որ Կիպրոսի նախագահն այդ օրը, սեպտեմբերի 26-ին, կեսօրին էր միայն վերադարձել Նյու Յորքում ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանից եւ, ինչպես տեղեկացրեց մեզ Նիկոսիայի մեր թղթակիցը, վերադառնալուց առաջ տեղյակ էր պահել Կիպրոսի խորհրդարանում հայ համայնքի ներկայացուցիչ Պետրոս Գալայրյա դեսպաններ եւ, անշուշտ, ՀՀ դեսպան Արման Կիրակոսյանը (նստավայրը՝ Աթենք): ՀԲԸՄիության Մելգոնյան կրթական հաստատության բակում հյուրերը դիմավորվել են դպրոցի փողերախմբի հնչյունների տակ, եւ երկու երկրների պետական օրհներգերի ունկնդրումից հետո տեղի է ունեցել հյուրասիրություն:



Նկարում՝ տեր եւ տկն Պետրոս եւ Լիզա Գալայճյանները, նախագահ Քլերիդեսը, դեսպան Կիրակոսյանը եւ Կիպրոսի թեմի առաջնորդ Վարուժան եպս. Հերգելյանը:

Սկիզբը էջ 1

Կազմակերպող հանձնախմբի երիտասարդ խոսնակ Կասրին Քելեջյանը բացելով արարողությունը հայտնեց, որ ստացված ողջ հասույթը կբախշվի Թեթեյան մշակութային կենտրոնի հովանավորած երեք երեւանի, Կարբիի եւ Գյումրիի դպրոցների միջեւ, որոնք ավելի քան 3.000 աշակերտ ունեն:

Տոնակատարության տնօրեն Տեյմս Քելեջյանը հյուրերին ողջունելուց հետո ներկայացրեց հայկական համագումարի գործադիր տնօրեն Ռոս Վարդյանին եւ բեմ հրավիրեց նրան:

Խոսքը սկսելով հայ ժողովրդին բաժին հասած դժվարություններով՝ պրն Վարդյանն ասաց. «Սառը պատերազմի ավարտից հետո Կոնգրեսը փորձեց ձեւավորել Միացյալ Նահանգների հարաբերությունները նախկին ԽՍՀՄ-ի եւ կովկասյան նորանկախ հանրապետությունների հետ: Այս երեկո մեզ հետ են այդ գործի առաջամարտիկները, ովքեր ձեւավորում են Միացյալ Նահանգների կովկասյան քաղաքականությունը: Ամերիկահայերը շնորհակալ են կոնգրեսականներից, որոնց շնորհիվ ԱՄՆ-ի կովկասյան քաղաքականությունն այսօր ավելի հավասարակշռված ու հագեցած է: Շնորհակալ ենք կոնգրեսում եղեռնի հարցը բարձրացնելու, հումանիտար օգնության միջանցքի, 907 բանաձեւի, Հայաստան ուղարկվող ամենամյա օգնության համար, որի հանրագումարը մոտենում է 1 միլիարդին: Շնորհակալ ենք «Մեսախի ճանապարհին» դեմ արտահայտվելու համար, ինչն, իրոք, հաջություն էր պահանջում»: Շարունակելով խոսքը նա ասաց. «Հաջորդ շաբաթ 1999 ֆինանսական տարվա արտաքին օգնության մասին օրենքի ընդունման ժամանակ այս պարտությունը շատ կարեւոր դեր ունեն խաղալու: Կարեւոր է նշումը դեռ նաեւ Սոֆիտակ տան ու Սենատի միջեւ այս հարցով ծագած տարաձայնությունները հարթելու ժամանակ: Պիտի կարողանան հասնել Ղարաբաղին անմիջական օգնություն տրամադրելուն՝ առանց նախապայմանների, փորձեն որեւէ բան անել ղարաբաղյան հակամարտության լուծման համար»:

Այնուհետեւ Արման Նորհատը ներկայացրեց Մարդու իրավունքների պաշտպանության դաշինքի հիմնադիր եւ նախագահ Կասրին Կամերուն Պորտերին: Տկն Պորտերը եղել է Ղարաբաղի դիրքերում, ինչի մասին պատմելով շատ հուզեց ներկաներին:

Ելույթ ունեցավ նաեւ Վաշինգտոնից հատուկ այդ երեկոյի առիթով ժամանած կոնգրեսական Ջոն Նոլլենբերգը, որն ակտիվ գործունեություն է ծավալել որպես Սոֆիտակ տան հաշվեքննիչների կոմիտեի անդամ: Հայաստանին իր անկախության 7-րդ տարեդարձի առթիվ շնորհավորելուց հետո նա ասաց, որ այդ 7 տարիների ընթացքում Միացյալ Նահանգների Հայաստան ուղարկված օգնությունը 1 միլիարդի մոտ է, եւ որ հաջորդ տարի Ղարաբաղին հատկացված օգնությունը կկազմի 20 մլն դոլար:

Մեծարգո կոնգրեսականը եղել է Հայաստանում, տեսել պայմանները, որում ապրում է ժողովուրդը: Այդ մասին նա ասաց. «Անցյալ տարի ես գլխավորեցի կովկասյան տարածաշրջան մեկնած կոնգրեսականների պատվիրակությունը: Մենք այցելեցինք Հայաստան, Վրաստան, Ադրբեջան եւ Արցախ, ես անձամբ տեսա, թե ինչպես են ապրում մարդիկ Հայաստանում, զգացի ինչքան նուրբ է քաղաքական վիճակը տարածաշրջանում: Դա ավելի համոզեց ինձ, որ Միացյալ Նահանգները պիտի շահագրգռված լինի կովկասյան տարածաշրջանում խաղաղություն եւ ժողովրդավարություն հաստատելու համար, եւ պիտի ուղղակի օգնի հայ ժողովրդի վիճակը թեթեւացնելու գործին: Հատկացումների կոմիտեից դուրս գալով, արտաքին օգնության օրենքն արդեն չէր պարունակում 907 բանաձեւը: Բարեբախտաբար, ամեն ինչ հնարավոր եղավ ուղղել: Համոզված եմ, որ ես կշարունակեմ պայքարել, պնդել, որ 907 բանաձեւը չպետք է վերացվի»:

Սոֆիտակ տան հատկացումների կոմիտեի անդամ եւ հայկական կազմ-կոմիտեի համանախագահ Ջոն Ի. Պորտերն ասաց, որ հպարտ է կնոջ՝ Կասրինի ծավալած ակտիվ քաղաքական գործունեությամբ՝ ի նպաստ Հայաստանի, իսկ ինքը հայերին կցանկանար միասնականություն իրենց ցանկությունները կոնգրեսում եւ Սոֆիտակ տանն արտահայտելու գործում:

Հայ ազգային կոմիտեի ներկայացուցիչ Արամ Համբարյանը ողջունեց հավաքվածներին եւ շնորհավորեց Հայ ազգային դաշինքը, որին հաջողվել է հայկական մեկ խնդրի շուրջ հավաքել տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչներին:

Երեկոյի «հերոսը»՝ Բենջամին Գիլ-

ՌԱԿ Հայ ազգային դաշինքը Չիկագոյում մեծարեց կոնգրեսական Բենջամին Գիլմանին

մանը, որը կնոջ հետ ժամանել էր Նյու Յորքից, նախ տարածաշրջանի խոր քաղաքական վերլուծությունն արեց՝ նշելով այն վտանգավոր ձեւափոխությունները, որոնք կարող են առաջանալ Կովկասում եւ Միջին Արեւելքում անխոհեմ քաղաքականության դեպքում: Նա ասաց, որ 907 բանաձեւի պահպանումն իրական հաղթանակ էր, որը ջանքեր պահանջեց: Պրն Գիլմանը հայտնեց, որ ընդունել է Հայաստան ու Ղարաբաղ այցելելու Հայ ազգային դաշինքի նախագահ պրն Ռուբեն Թերզյանի եւ տիկնոջ հրավերը, սակայն նրա ամենահետաքրքիր գաղափարը երեք հանրապետությունների նախագահներին գագաթաժողովի հրավիրելն է, ինչը, վստահ է, բեկում կմտցնի Ղարաբաղի հակամարտությունը լուծելու հարցում:

Եզրափակելով ծրագիրը, Արման Նորհատը բեմ հրավիրեց երեք օրենսդիրներին եւ նվիրեց հայկական ալբոմներ: Ներկաների բարի կամքով երեկոյի ընթացքում հանգանակվեց ավելի քան 10 հազար դոլար՝ կոնգրեսական Գիլմանի ընտրարշավի համար: Արա երիտասարդները հրավիրվեցին ուրարտահ՝ պարելու հանդիսավոր նախագահքի մեղեդիների տակ:

Տոնակատարության նպատակն ու առաքելությունը հայ ժողովրդին միասնական կոչ ուղղելն էր, կոչ, որը լսվեց բարձր ու հստակ:

Ռ. ԱԶԻԶՅԱՆ

Ոսկերիչների երկու կենտրոն

Ամփոփելու համար Հայ ոսկերիչների միության համագումարը, որը կայացավ վերջերս, փորձեցի պարզել ինչ պայմանավորվածություններ եղան եւ ինչպես լուծվեց վիճահարույց հարցը՝ կապված բիզնես կենտրոնի եւ ոսկերիչների դպրոցի ստեղծման հետ: Այդ առթիվ դիմեցի Երեւանի ոսկու գործարանի տնօրեն Էմիլ Գրիգորյանին եւ ՀՈՄ-ի նախագահ Գեւորգ Օսկանյանին:

– Պրն Գրիգորյան, ձեզ արդեն տրամադրվել է հողատարածք ոսկերիչների դպրոցի համար նոր նորք համայնքում: Համագումարում պարզվեց, որ ՀՈԱ-ին նույնպես տրամադրվել է Շահումյան հրապարակում հողատարածք՝ նույնատիպ կենտրոն եւ դպրոց բացելու համար: Մեկ նույն նպատակի համար երկու տարբեր հողահատկացումներ: Դուք շինարարությունը սկսել եք: Ինչպիսի՞ն է լինելու նրա հետագա ճակատագիրը:

– Շինարարությունը սկսված է, կանգնեցված, ներկայացված է ընարկման: Երկու շինարարություններն էլ բավականին ներդրումներ են պահանջում, եւ մենք առաջարկում ենք հետեւյալը՝ Երեւանի կենտրոնը շատ թանկարժեք տարածք է եւ խիստ ծանրաբեռնված: Նրա յուրաքանչյուր մետրը պետք է այնպես օգտագործել, որ շահութաբեր լինի թե քաղաքապետարանին, եւ թե համապատասխան կոմերցիոն կազմակերպություններին: Ես գտնում եմ, որ ավելի նպատակահարմար է ոսկերիչների դպրոցի եւ բիզնես կենտրոնի կառուցումը՝ որ ինքն իրեն շահութաբեր գործ չէ, բայց հայրենանվեր եւ ժողովրդանվեր է, շարունակել այստեղ: 3 հա տարածքը, ուր արդեն անցկացվել են բոլոր կոմունիկացիները, 350 հազար ԱՄՆ դոլարի ներդրում է կատարված: Եթե սփյուռքի ներկայացուցիչները միանան մեզ, կարելի է շատ գեղեցիկ կենտրոն ունենալ: Դպրոցը կազմակերպված է ուսումնառության չորս տարվա ծրագրով, ուր կարող են [illegible] տարի սովորել 70-80 աշակերտ: Տարածքում ունենք 200 աշակերտի համար հյուրանոց, կան նաեւ 8 քոթեջային տնակներ, որտեղ կարող են բնակվել արտասահմանից հրավիրված մասնագետները: Դպրոցի մի մասը կարելի է տրամադրել որպես բիզնես կենտրոն հայ ոսկերիչներին ու ադամանդագործներին: Հետագայում էլ շատ պլաններ կան՝ կապված դպրոցի հետ:

– **Կհաջողվի՞ արդյոք համատեղ կաղը:**

– Ինձ թվում է, պետք է հաջողվի, որովհետեւ ՀՈՄ-ը նոր կազմակերպություն է, սփյուռքում շատ մեծ շրջանակ ունի եւ նրա հետ համագործակցությունը դեռ նոր է սկսվել:

– **Բանավեճի ժամանակ ի՞նչ արդյունքի հասաք:**

– Իհարկե, առանց բանավեճի լուծումներ չեն լինում: Կարդանք՝ կտեսնենք:

Վերջնական լուծում ստացվե՞լ է արդյոք բիզնես կենտրոնի եւ ոսկերչական դպրոցի կառուցման ու միաբանության համար՝ այդ հարցը փորձեցի պարզել ՀՈՄ-ի պատվավոր նախագահ Գեւորգ (Ջանիկ) Օսկանյանից:

– Համագումարի բուն նպատակն էր միաբանել աշխարհի հայ ոսկերիչներին եւ ադամանդագործներին,- ասաց պրն Օսկանյանը: Համագումարը ես նմանեցնում եմ պտղատու ծառի, որի տակ նստելով պտուղ չես քաղի, ժամանակ է հարկավոր, որ այդ պտուղը հասունանա: Համագումարը ավարտված չէ, բացված է ու երկար շարունակություն պիտի ունենա:

Այսպիսին էր պրն Օսկանյանի ելույթի սկիզբը համագումարի պատվին կազմակերպված ճաշկերույթի ժամանակ, որին ներկա էր նաեւ Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որն իր հավանությունն էր տվել այդ կարեւոր իրադարձությանը՝ նշելով, որ համագումարը մեծ նշանակություն կունենա հետագայում նույնպես զարգացնելու արտադրության մյուս ճյուղերը:

– Ադամանդագործության կենտրոնը Հայաստանը դարձնելը շատ ավելի հեշտ է,- շարունակեց պրն Օսկանյանը,- քանի որ լավագույն մասնագետները Հայաստանում են, իսկ ոսկերչականը դեռ շատ ուժ ու ներդրում է պահանջում: Կալիֆորնիայում ոսկերչությամբ զբաղվողների 90 տոկոսը հայեր են եւ նրանց օգնությունը շատ կարեւոր է: Իսկ տարածքն էական հարց է: Ոսկերչություն-ադամանդագործությունը ժամանակակից տեսքով ներկայացնելու համար ես գտնում եմ, որ Շահումյան հրապարակում բիզնես կենտրոնի կառուցումը ճիշտ է: Այնտեղ կլինեն նաեւ վաճառասեղաններ, գրասենյակներ, որը շահավետ օգտագործելուց հետո այդ գումարները հանգիստ կարելի է հատկացնել ոսկերչության եւ ադամանդագործության դպրոցին՝ նաեւ հրավիրելով լավագույն մասնագետներ՝ ուսուցանելու այդ արհեստները: Վերադառնամ տարաձայնությունների հարցին: Եղբայրների մեջ էլ տարաձայնություններ լինում են: Մենք այցելեցինք Նոր Նորք համայնքի տարածքում հատկացված դպրոցի շինարարական հրապարակ: Անկեղծ ասեմ, շատ հավանեցինք: Այն կարող է ծառայել լավագույն մասնագետների ուսուցմանն ու զարգացմանը: Մեր նպատակը մեկն է՝ մեկ երկիր, մեկ պահանջ, մեկ արդյունք: Երկու դպրոց բացելն օգուտ չի տա, ինչ էլ որ սովորեն դպրոցում: Մեկ տեղում թող լինի բիզնես կենտրոն, մյուսում՝ դպրոց՝ կենտրոնից առաջացած գումարների հաշվին: Մենք եկել ենք շինելու, զբոսնելու չենք եկել: Եթե ադամանդագործությունը մեկ կամ երկու հոգով կարելի է կազմակերպել, ոսկերչությունը՝ թե կապիտալի ներդրում է պահանջում, թե շատերի աջակցությունը:

Խոսակցության ընթացքում պրն Օսկանյանն իր դժգոհությունը հայտնեց հյուրանոցում ոչ հայկական հանձային եւ զովացուցիչ ջրեր լինելու համար: «Ինչո՞ւ ենք դրսից ներմուծում այն, ինչն ունենք, եւ լավագույնը կարող է դառնալ, եթե մի փոքր ուշադրություն լինի: Իտալական Մարուլի ֆիրմայի կոշիկը 300 դոլարով վաճառվում է ձեր խանութներում, երբ հայկական կաշին ու կոշիկները շատ լավ որակ ունեն, այս հարցերի շուրջ լուրջ պետք է մտածել»: Վերջում որպես գաղտնի պրն Օսկանյանը հայտնեց, որ շատ շուտով Հայաստանում կհիմնի իր զույգ ձեռնարկությունը, առաջինը Երեւանի ոսկերչական գործարանի հետ ոսկերչության բնագավառում, երկրորդը՝ Նոր Հաճընում՝ ադամանդագործության:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՔԱՐՅԱՆ

ԵՐԱԽՏԻՔ

Այդպիսի հարեւաններ էլ են պատահում

«Ֆիզիկոս» բնակելի շենքի (Սոսեի 2/2) բնակիչներ գիտության թեկնածուներ, ամուսիններ Էդուարդ Չոբանյանն ու Գոհար Էլբակյանը վաղուց ի վեր իրենց հարեւանների համար թանկ մարդիկ են, որոնց շնորհակալ են շենքի բոլոր բնակիչները: Էդուարդ Չոբանյանը Երեւանի թիվ 1 հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի վարիչն է, հմուտ վիրաբույժ, հարգված բժիշկ-ղեկավար, որի աշխատանքի շնորհիվ փրկվել են բազմաթիվ կյանքեր: Գոհար Էլբակյանը Երեւանի ֆիզիոթերապեւտիկ գիտահետազոտական ինստիտուտի բաժնի վարիչն է: Արդեն 15 տարի այս բժիշկները իրենց մասնագիտական անշահախնդիր օգնությունն են ցուցաբերում նաեւ աշխատանքից դուրս՝ շենքի բոլոր բնակիչներին: Իրենց փրկարար «03», որ անմիջաբար հոսպիտալ է: Այստեղից էլ շենքի բնակիչների երախտագիտությունը: Ինչպես փաստարկում է «Ֆիզիկոս» բնակելի շենքի բնակչուհի Դ. Հարությունյանը, այդպիսի հարեւաններ էլ են լինում՝ օգնիր եւ քեզ կօգնեն:

digitised by A.R.A.R.@

Ազգային

– Արբազան հայր, ԵՊՀ-ում աստվածաբանական բաժանմունք հիմնելը երեւույթ է: Ի՞նչ կասեիք այդ մասին:

– Հարցադրումը ճշմարիտ է, բայց ես կանդրադառնամ մեր առօրյային: Մեր ծրագրերը համադասախանում են գիտական համալսարանների ծրագրերի մակարդակին, որը ընթանում է ոլորտացված եւ գիտությունների մեջ մարզված դասախոսների

Առաջինը լինելը ոչ միայն պատիվ է, այլեւ պարտավորություն

1988-ի երկրաշարժից հետո, երբ հայրենիքը հանձնվել էր ճակատագրի խամահարանքին, Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը թողեց արտասահմանի իր բազմազբաղ կյանքը, եկավ հաստատվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում եւ իր ժողովրդի հետ տանելով բոլոր դժվարությունները, ճշակեց ու իրականացրեց ծրագիր, որոնք նպաստեցին, որ հայրենիքը դուրս գա ճգնաժամային վիճակից: Հատկապես նրան ճանաչել է ազգային արժեքները պահպանելու, ինչպիսին Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գանձերն են, գիտահրատարակչության եւ այլ խնդիրներ: Սակայն մեծ ու փոքր ծրագրերի փառաշուքը հանդիսացավ ԵՊՀ-ում նրա ջանքերով հիմնված աստվածաբանական ֆակուլտետը, որի դեկանն է այժմ:



գիտելիքները փոխանցեն մեր սաներին: Ժորա Պաղոյանին ուղարկեցինք Սանկտ Պետերբուրգի հոգեւոր ճեմարան վեց ամիս քրիստոնեական բարոյախոսություն ուսումնասիրելու: Լեզվի դասախոսներ ենք ուղարկում Անգլիա:

– Ձեր գրադարանն իր տեսակի մեջ այսօր կարելի է անմրցակից համարել իր հարուստ եւ արժեքավոր հավաքածուով: Ի՞նչ նոր գրքերով եք համալրել:

– Այս տարի 500-ից ավելի նոր գրքեր ենք ստացել: Պրոֆեսոր Գոլցի հետ Լեփսիուսի ընտանիքը մի քանի գիտնականներով այցելեց մեզ եւ 200 կտոր շատ արժեքավոր գրականություն նվիրեց. բառարաններ, հանրագիտարաններ, Սուրբ Գրքի մեկնություններ, կրոնական բովանդակության այլ գրքեր գերմաներեն: Մեծ թվով ֆրանսիական գրականություն ենք ստացել վերադարձվելի Սամվելյանից: Անգլիայից ստացել ենք նոր հրատարակված Սուրբ Գրքի աստվածաբանության բարոյախոսության արժեքավոր աշխատություններ: Չիկագոյից վերադարձելի Սարոն Կայայանը տարիներ ի վեր մեզ է ուղարկում անգլերեն շատ հիմնական հրատարակություններ, ինչպես եկեղեցու հայրերի գրականության բազմահատոր շարքը:

– Բացի հոգեւորական, գիտական լինելուց դուք կոչումով ուսուցիչ եք՝ հաճախ հետաքրքիր ծրագրերով եք հանդես եկել: Ինչպես են ընդունվել Ձեր առաջարկությունները:

– Սովորաբար իմ առաջարկությունները հարգվել են եւ ընդունվել, հատկապես կազմված մեր ֆակուլտետի ծրագրերի հետ: Սակայն արել եմ մեկ առաջարկ, որը սկզբունքորեն ընդունվել է, բայց չի կիրառվել, այն է՝ Թարգմանչաց տոնը ամեն տարի նշվի համալսարանում եւ ուղեկցվի գիտական հավաքույթներով: Մեր սրբազան թարգմանիչները ոչ միայն զուտ կրոնական իմաստով ոգեկոչվեն, այլեւ հայ լեզվի եւ մշակույթի օր հաստատվի համալսարանում, նաեւ ողջ հանրապետությունում: Մեզ համար հայոց լեզուն սրբություն է: Այդ սրբությունը արժանի կերպով չի ճանաչվում այսօրվա մեր կրթական իրականության մեջ: Դժբախտաբար համալսարանում էլ կան մարդիկ, որոնք նախընտրում են լենինյան անաստվածությունը Մեսրոպյան աստվածաշնչությունից:

– Առաջիկայում ի՞նչ ծրագիր ունեք իրականացնելու:

– Օրերս մեր միջոցներով հրատարակվեց Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» աշխատության բնագիրը, որը կարված է մեր դավանանքի հետ (աշխատությունը Վազգեն Վեհափառի հանձնարարությամբ սկսել էր լուսահոգի Հակոբ Անասյանը, ավարտեցին Մատենադարանի աշխատող Հակոբ Քյոսեյանը եւ Տեր Շահե քահանան): Պատրաստ է հրատարակության հայոց տոմարին եւ տոնացույցին նվիրված մեծ աշխատություն, որը շուտով կհրատարակվի: Գիտնականների ուշադրությունը հրավիրում եմ զանազան չլուսաբանված խնդիրների վրա: Եթե նրանք ուսումնասիրություններ են կատարում եւ կարեւոր ձեռագրերի բնագրեր պատրաստում՝ անպայման հրատարակվում են:

– Ի՞նչ կասեիք այսօր հայրենիք թափանցած աղանդների մասին:

– Գլխավոր մտահոգվողը պետք է լինի պետությունը: Նախկինում արտոնված էր մեկ կրոն՝ անկրոնություն, այսօր ազատության ոգի տակ թափանցել են մեզ համար օտար ու խորթ տարրեր: Պետության հակազդեցությունն այն է, որ եկեղեցին հայտարարվում է պետությունից անկախ: Եթե մենք պետք է կերտենք հայեցի նոր սերունդ, ապա չենք կարող նրան զրկել իր պատմությունից, որն այս դեպքում նշանակում է մարդուն օտարել հավատից: Շատ կարեւոր է, որ կրթության նախարարությունը մտահոգվի եւ կրթական համակարգում խորացնի հայկական, ազգային ոգին: Գիտելիքներին տիրապետելուն զուգահեռ ուսանողը պետք է ստանա նաեւ հայկական մտածողություն, որպեսզի հետագայում կարողանանք ասել, որ մենք իբրեւ դասատիրակ եւ ուսուցիչ, մեր պարտականությունը կատարեցինք նոր սերնդի համար: Պատահական չէ, որ ես մեր ծրագրերում ընդգրկել եմ ուխտագնացություններ դեպի հայոց եկեղեցիներ, հուշարձաններ, Անի, Մծբնա, որպեսզի նրանք հաղորդակցվեն իրենց նախնիների ոգեղեն արժեքներին: Սա չափազանց կարեւոր հանգամանք է: Այլապես հայը ոչ միայն սփյուռքում, այլեւ իր հայրենիքում կարող է օտարվել, կտրվել նախնիների հարուստ ժառանգությունից, անգամ բնամանալ իր հանրությանը.

խորթացմանը նպաստում են օտար աղանդներն ու կրոնները: Սա թե ինչու պետականորեն ռազմավարական առումով չափազանց կարեւոր է Հայոց Առաքելական եկեղեցու հզորացումը, որ մեր ազգի մեջ պառակտում, տարազատում, խորթացում չլինի: Ես լավատես եմ ընդհանրապես եւ իմ հանդիպումը բարձրագույն կրթության եւ գիտության նախարար պրն Մկրտչյանի հետ ինձ ներշնչեց այն վստահությունը, թե շատ բան պիտի փոխվի մեր կրթական կյանքում, սկսած դպրոցներից մինչեւ ինստիտուտ ու համալսարան, բոլոր ուսումնական հաստատությունները պետք է ձգտեն գիտությունը չթողնել առանձին, այլ խարսխել այն հայկական ամուր նկարագրով, որովհետեւ գիտությունը եւ դաստիարակությունը ձգտում են մեկ նպատակի՝ կերտել վաղվա հային, որը պատրաստ լինի ծառայելու իր հայրենիքի կերտմանը եւ որի կյանքի հիմնական նշանաբանը չլինի ինչպես օգտվել հայրենիքից, այլ ինչպես ծառայել հայրենիքին:

Շահե Սրբազանի լավատեսությունը փոխանցվում է նաեւ մեզ, քանզի աստվածաբանական ֆակուլտետը իր 182 ուսանողներով եւ պատրաստված դասախոսներով իրարանցում է այն հոյակապը, որի համար կյանքի է կոչված: Այս ուսումնական տարում 25 երջանավարտների կհանձնվեն աստվածաբանական ֆակուլտետի վկայականներ, տարիներ հետո 25-ը պիտի դառնա 50, 100... Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը որպես առաջ գործի հիմնադիր եւ ուսուցչապետ ներկա է լինելու ազգի նկարագրի կերտման սրբազան ակունքներում, նրան մոտ պես հիշելու են հաջորդները որպես առաջինի: Առաջինը լինելը ոչ միայն պատիվ է, այլեւ պարտականություն:

ՍԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

Ինչո՞ւ ժողովուրդը չի պատշաճում «ժողովրդի ընտրյալներին»

Ռուսաստանում օրենսդիր եւ գործադիր մարմինների հակամարտությունը հասել է գագաթնակետին. Դուման սպառնում է իմպիչմենթի գործընթաց սկսել նախագահ Ելցինի դեմ. ընդդիմությունը համերկրային ցույց է կազմակերպում նախագահի հրաժարականի պահանջով, իսկ անկյուն քշված նախագահը, որը դեռ 5 տարի առաջ տանկային թնդանոթներով գնդակոծում էր Ռուցկոյ-խասբուլատովյան խորհրդարանը չի համարձակվում ծոցուն հանել:

Տրամագծորեն հակառակ իրավիճակն է Հայաստանում: Մեզ մոտ էլ խորհրդարանում կրքեր են բորբոքվում, նիզակներ են ջարդվում, նախագահին ներկայացվում են բարձրագոչ մեղադրանքներ, այդ թվում Սահմանադրությունը ոտնահարելու մասին, Աժ ընդդիմադիր թեւը ձգտում է իմպիչմենթի գործընթաց սկսել, իսկ ժողովուրդը լո՞ւռ, անտարբե՞ր, նույնիսկ չի էլ ուզում ունկնդիր լինել ողջ այս քաղաքական ճամարտակությանը. մտքովն իսկ չի անցկացնում «տեր կանգնել» իր «ընտրյալներին»: Որովհետեւ այդ «ընտրյալների» մի զգալի մասը իրականում ամենեւին էլ ընտրյալ չէ. խորհրդարանական աթոռներին հայտնվել է նախորդ իշխանությունների ժամանակ անցկացված օրապակաս «ընտրությունների» կեղծիքների, բռնությունների ու ահաբեկչության, ընտրակաշառքների ու քիրս կամայականությունների արդյունքում: Պատգամավորների մյուս մասը, որն այս կամ այն չափով արդարորեն կամ, ավելի ճիշտ, ընտրողների միամտության, նրանց հավատի շահարկման հետեւանքով է այստեղ հայտնվել, վաղուց արդեն կորցրել է վստահությունը ժողովրդի աչքում, վարկաբեկել է ինքն իրեն: Օրինակ, «Հանրապետություն» խորհրդարանական խմբակցությունը, ուր հիմնականում մնացել են ՀՀՇ-ի եւ դեռ 1995-ին ժողովրդի մեջ զոյական վարկանիշ ունեցող արբանյակային կուսակցությունների պատգամավորները, 52 ձայն ունի ներկա Ազգային ժողովում, որը կազմում է 36 տոկոս: Բայց ո՞ւմ համար է գաղտնիք, որ ՀՀՇ-ն այսօր առնվազն 100 անգամ պակաս համակրանք ունի ժողովրդի մեջ: Նույնիսկ ՀՀՇ-ի լիդեր Վանո Սիրադեղյանն է Աժ երեկվա նիստում խոստովանել, որ նոր ընտրությունների դեպքում իրենք խորհրդարանում կունենան 5 տոկոս ձայն: Կարծում եմ խիստ չափազանցված պատկերացում է ՀՀՇ-ն, ազատ ու արդար ընտրությունների դեպքում (ինչի հույսը չեմ կորցրել) խորհրդարանական ընտրություններում, եթե դրանք վաղը կայանային, երբեք չէր հաղթահարի 5 տոկոսի սահմանգիծը: Բայց սա չէ էականը, սա դեռ հետո կերեւա: Էականն այն է, որ այժմ մենք ունենք ժողովրդի մեջ բացարձակապես ոչ մի հենարան չունեցող պատգամավորների մի սվար խումբ, եւ արդեն այս իրողությունը լիուլի բավական էր, որպեսզի հանրապետության նախագահը, անսալով իր ընտրողների պահանջին, նախագահական ընտրություններից անմիջապես հետո ցրեր Ազգային ժողովը: Նախագահը, ինչ-ինչ նկատառումներով, չցանկացավ գնալ այդ քայլին: Եվ այսօր, պարզ ասած, խաղում է իր մեծահոգության դաշը պտուղները: Սխալ, պիտի նաեւ իմանաս, թե ո՞ւմ հանդեպ ես մեծահոգություն ցույց տալիս: Ի տարբերություն նախագահի, որը հայասանյան քաղաքական մթնոլորտում, այնուամենայնիվ, նոր մարդ էր, երեկվա ընդդիմադիրներս շատ ավելի լավ էինք ճանաչում ՀՀՇ-ական իշխանություններին էլ: Ինչպես երեւում է, հիմա արդեն նախագահն էլ է նրանց ճանաչել եւ հոկտեմբերի 6-ին մի խումբ լրագրողների հետ իր հանդիպման ժամանակ, որը տեսաֆիքսվեց հեռուստատեսությամբ, այդ պարզորոշ զգացվեց: Կարծում եմ, նախագահն այժմ իրոք պատրաստ է վճռական գործողությունների դիմելու Աժ-ի նկատմամբ: Հատկանշական է, որ նախագահի տրամադրության այս փոփոխությունը, որի հրահրողները հենց իրենք էին, շատ լավ զգացել են նաեւ երեկվա իշխանավորներն ու ներկայիս ընդդիմադիրները: Ջուր չէր ՀՀՇ-ի երեւելի գործիչը հոկտեմբերի 6-ին խորհրդարանական ամբիոնից հայտարարում, թե «ԽԳ եւ ԱՍ նախարարությունը կիսաս-պռաս երեսական գործեր կատարի, կգա Աժ, Աժ-ն կմերժի եւ խորհրդարանի համար կստեղծվի երեսական ուժերին հովանավորողի իմիջ»: Մերժելը դեռ կտեսնենք, իսկ մյուս հարցերում պիտի հիասթափեցնեմ հարգելի պարոնին՝ խորհրդարանի համար երեսական տարերին հովանավորողի իմիջ ստեղծելու կարիք ամենեւին չկա, այդ իմիջը ձեւավորվել է շատ վաղուց, հենց 1995-ի հուլիսի 5-ի խայտառակ ընտրությունների օրվանից: Խորհուրդ կտայի գնալ ժողովրդի մեջ եւ հարցնել՝ քանի՞ տոկոսն է հավատում, թե այսօրվա խորհրդարանում երեսական տարեր չկան, կաբադակներներ ու պատգամավորներ, անգամ մարդասպաններ չկան: Շատ փոքր մասը: Տխուր է, բայց, ինչպես ասում են, փաստ է, ինչ տարիներով ցանել են, այն էլ հնձում են: Էլ ումի՞ց ու ինչո՞ւ են նեղանում, ինչո՞ւ են պատնեշ կոչում, իմպիչմենթի շուներ սաեռում, դատապարտվածի կատաղությամբ նախահարձակ լինում ներկա իշխանությունների վրա, երազում նրանց սասանել՝ եթե ոչ կառավարման ղեկին կրկին տիրանալու, ապա գոնե նախկինում կատարած չարագործությունների պատասխանատվությունից խուսափելու համար:

Քաջություն չունեն իրենց մեղքերը խոստովանելու, դրանց համար պատիժ կրելու, ներում աղերսելու: Ի դեպ, հավատի աղբյուրից ստացած տեղեկություններով, լուսահոգի Հենրիկ Խաչատրյանի մատնանշած 4 պատգամավորներին, որոնք մեղադրվում էին կոնկրետ երեսական հանցագործության մեջ, ավելացել են եւս երկուսը: ՀՀՇ-ի ժամանակ կոծկված շատ հանցագործությունների քննությունը դեռ շարունակվում է, եւ չի բացառվում, որ այս թիվն ավելանա: Սա թե որն էր հոկտեմբերի 7-ին Աժ նիստում տեղի ունեցած կատաղի բախման թաքուն զսպանակը: Ի՞նչ արած, նույնիսկ անմեղության կանխավարկածի հանդեպ ամենայն հարգանքի դեպքում ստիպված ենք արձանագրել, որ ժողովրդի հավատի լլկման իրենց բազմաձյա գործունեության հաշիվը այդ էր:

ԱՌԱՔԵԼ ՀՈՎՀԱՆԵՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Դատելով տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվությունից, հոկտեմբերի 7-ին Ռուսաստանում տեղի ունեցած համընդհանուր բողոքի ցույցը ամենևին չի ունեցել այն ծավալները, որ տեւականորեն տարփողում էին ընդդիմադիրները: Դեռ նախօրեին նրանք սպառնում էին փողոց դուրս բերել ոչ պակաս 40 մլն մարդ: ՆԳ նախարարության պաշտոնական տվյալներով, նախօրոք հայտարարված 820 բնակավայրերից ցույցեր տեղի են ունեցել միայն 500-ում, դրանց ողջ երկրում մասնակցել է առավելագույնը 1 մլն մարդ: Հենց միայն Մոսկվայում երեք շաբաթյան փոխարեն վերջին պահին փողոց էին դուրս եկել երկու շաբաթյուն (արմատական կոմունիստները միացել էին զյուգանովականներին): Այդ շաբաթյուններում ընդհանուր առմամբ եղել է մինչեւ 150 հազար մարդ: Ինչը, արմատական բոլշեւիկ-լենինյանների առաջնորդ Վիկտոր Ամպիլովը հեռուստաէկրանից վիճարկում էր սա եւ պնդում, թե մոսկովյան ցույցերին մասնակցել է 200 հազար մարդ: Եթե նույնիսկ սա համարենք ճշմարիտը, ապա չենք կարող չարձանագրել, որ 9 միլիոնանոց մայրաքաղաքի համար սա կաթիլ է օվկիանոսում: Այդպի՞ս նման հիասթափությունը չէր պատճառը, որ կոմունիստների առաջնորդ Գենադի Զյուգանովը ընդհանրապես հրաժարվեց ելույթ ունենալ հանրահավաքի մասնակիցների առջեւ: Այսպիսով, ինչ էլ լինի, որքան էլ պաշտոնական իշխանությունները միտումնավոր նվազեցրած լինեն ցուցարարների թիվը, մի բան ակնհայտ է համառուսական բողոքի ցույցը գործնականում չհասավ իր նպատակներին: Ռուսաստանը ճնշող մեծամասնությամբ անտարբեր մնաց ոչ միայն նախագահ Ելցինի անհապաղ հրաժարականի, այլեւ Խորհրդային Միությունը վերականգնելու եւ այլ արմատական քաղաքական պահանջների հանդեպ՝ գերադասելով ոչ թե կոմունիստական կարմիր, այլ արհիմիթենական կարգույթ դրոշակների տակ վանկարկել տնտեսական պահանջներ:

Բուն ցույցն անցավ կազմակերպված, առանց անցանկալի միջադեպերի եւ հասարակական կարգը պահպանողների ու ցուցարարների բախումների: Ըստ լուրերի, Մոսկվայում միայն մի 78-ամյա ծերունի է հանկարծամահ եղել սրտի կաթվածից: Իրավիճակի անկանխատեսելի զարգացումների դեպքում Պետդումայում անհապաղ համարժեք որոշումներ ընդունելու մտահոգությունը եւ այդ առթիվ խորհրդարանական խմբակցությունների ղեկավարների նախնական պայմանավորվածությունը գործադրելու անհրաժեշտություն չեղավ:

ՈՐԻՍԱՍՏԱՆ

Լեռ դրդրաց՝ մուկ ծնանեց

«Կոմունիզմի ուրվականը» առայժմ մարմին չի առնում

Հանրաքվեական բողոքի ցույցը հավաստեց առնվազն 4 իրողություն. ա) ժողովրդի հիմնական զանգվածը խորապես հիասթափված է եւ իշխանություններից, եւ ընդդիմությունից, բ) վերախմբագրելով Մարկ Տվենին կարելի է ասել, որ նախագահ Ելցինի քաղաքական մահվան մասին խոսակցությունները առայժմ խիստ չափազանցված են 148 միլիոնանոց երկրում ոչ միայն 1, այլ նույնիսկ 5-10 մլն մարդու «թախանձագին խնդրանքով» նախագահը հրաժարական չի տա, գ) ընդդիմադիր ճակատը միասնական չէ, այստեղ զգվոտոց է սկսվել դեռ չսպանած արջի մորթին իրար մեջ բաժանելու ռեժիմի դեմ պայքարի առաջնորդի դափնիների նվաճման համար, ինչն իր հերթին բերել է մեկը մյուսին «համաձայնողականության», ասել է՝ դավաճանության մեջ մեղադրելու, դ) իշխանության ճակատը եւս միասնական չէ, նահանգապետներից առնվազն մի քանիսը (Լեբեդ, Տուլեեւ, Այացկով) սեփական քաղաքական շահին են հետամուտ եւ ձգտում էին ժողովրդի դժգոհության էներգիան ծառայեցնել իրենց:

Ցույցն անվերապահորեն ապացուցեց հին ճշմարտությունը որտեղ սովի ուրվականն է թափառում, այնտեղ անմիջապես հայտնվում է նաեւ «կոմունիզմի ուրվականը»: Եվ եթե այս վերջինը դեռեւս մարմին առնելու միտումներ ցույց չի տալիս, ապա անկասկած է, որ երկրի բնակչության նյութական վիճակի հետագա վատթարացումը կարող է շատ շուտափելի դարձնել այս հեռանկարը: Պետք է արձանագրել, որ Ռուսաստանի նոր կառավարությունը այդ առթիվ որեւէ պատասխան չունի եւ լիովին հաշիվ է տալիս իրեն: Վարչապետ Պրիմակովը զուր չէր ցույցից մեկ օր առաջ, հոկտեմբերի 6-ի երեկոյան հեռուստատեսությամբ ժողովրդին հորդորում առնվազն կես տարի ժամանակ տալ իրեն խոստանալով լուծել ափսաավարձերի ամենամսյա վճարումների, հին պարտքերը մարելու, կենսաթոշակները բարձրացնելու, բանկային համակարգի փլուզումը կանխելու, այստեղ բնակչության ավանդների պաշտպանությունն ապահովելու եւ այլ հարցեր: Նա դառնությամբ ընդգծում էր, որ դրա համար ֆինանսական մեծ միջոցներ են պետք, եւ եթե իր կառավարությունը դեռեւս ծրագիր չի ներ կայացրել, ապա դա այն պատճառով, թե չգիտի է՞լ որտեղից գումար ներ հայթայթել, առանց որի ցան կացած ծրագիր խաբեություն է:

Վերջապես, ամենագլխավոր եզրակացությունը, որ պատկանում է Մոսկվայի նախկին քաղաքապետ, հայտնի տնտեսագետ Գավրիլ Պոպովին ռուս ժողովուրդն արդեն չի դնում գոյություն ունեցող հասարակարգի արմատական փոփոխության հարց, չի պահանջում ոչ նախագահական ինստիտուտի վերացում, ոչ սահմանադրության վերանայում, ինչը խիստ հատկանշական է: Ինչպես երեւում է, տուկայական բարեփոխումները, տուկայական տնտեսակարգը իրենց համար դժվարին ճամփա են բացել ռուսական հասարակական գիտակցության մեջ, եւ դա անդառնալի է:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՉԻՆԱՍՏԱՆ

Ուժայինները չեն կարող բիզնեսով զբաղվել

ՊԵԿԻՆ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Չինական բանակին, ՉԺՀ-ի ժողովրդական զինված ոստիկանությանը եւ իրավապահ մարմիններին արգելված է մասնակցել առեւտրական գործունեությանը: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, նման որոշումն ընդունվել է ՉԿԿ կենտկոմի, Պետխորհրդի եւ կենտրոնական զինվորական խորհրդի Պեկինում կայացած երկօրյա խորհրդակցությունում: Չինական մամուլն այսօր հաղորդում է, որ այսուհետ բանակի եւ ոստիկանության բոլոր ծախսերը պետությունն իր վրա է վերցնում: Չինաստանի ուժային կառույցներն, այսպիսով, դադարեցնում են քաղաքացիական պատերազմների տարիներին արմատացած «ինքնաֆինանսավորման» պրակտիկան, որը տուկայական բարեփոխումների փուլում բանակային եւ ոստիկանական կառույցների շրջանակներում հանգեցրել է ձեռնարկությունների հսկա կայսրության ստեղծման: ՉԺՀ-ի նախագահ Ցզյան Ցզեմինի կողմից համապատասխան շրջաբերական է ստորագրվել երկու ամիս առաջ, սակայն մինչ այժմ դրա կատարումը տեղերում ձգձգվում էր բիզնեսում զինվորականների եւ ոստիկանների լայնորեն ներգրավված լինելու պատճառով, որը հաճախ կապված է մախինացիայի եւ ապօրինի ֆինանսական գործարքների հետ: «Կաբառակերության դեմ պայքարը պետք է տարվի կանոնավոր կերպով, հակառակ դեպքում կտուժեն կուսակցությունը, պետությունը եւ բանակը, իսկ սոցիալիստական հայրենիքը՝ կկործանվի», -խորհրդակցությանը հայտարարել է ՉԿԿ-ի կենտկոմի քաղբյուրոյի մշտական կոմիտեի անդամ Խու Ցզինտաոը:

«Սթարի զեկուցագիրը» արգելված է որպես պոռնո

ՊԵԿԻՆ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Պեկինը պաշտոնապես արգելել է Չինաստանում «Սթարի զեկուցագրի» տարածումը: Ինչպես հաղորդել է մարաթաղաթի «Բեյջին ցզաոբաո» թերթը, մամուլի եւ հրատարակչությունների պետական վարչության պոռնոգրաֆիայի եւ անլեգալ հրատարակությունների դեմ պայքարի բաժինն արդեն «մեծ ֆանակությամբ» բռնագրավել է ԱՄՆ-ի հատուկ դատախազ Քենեթ Սթարի զեկուցագրի տարբեր վարկածներ, որը հետաքննել է ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի կապերը Մոնիկա Լեւինսկու հետ:

ՀԱՄԱՌՈՏ

ՏՐԱՍԵԿԱ կամուրջը միացրեց Վրաստանն ու Ադրբեջանը

ԹԲԻԼԻՍԻ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆՍՐՔ: Խրամ գետի երկու ափը՝ վրացական եւ ադրբեջանական, միացրած ՏՐԱՍԵԿԱ կամրջի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ հոկտեմբերի 7-ին: Բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին Վրաստանի ու Ադրբեջանի նախագահները, Վրաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավարը, Վրաստանում Գերմանիայի դեսպանը: Իր խոսքում էդուարդ Շեւարդնաձեն նշեց, որ «ԵՄ աջակցությամբ կառուցված այդ կամուրջը Վրաստանն ու Ադրբեջանը միացրած կարեւոր տարանցիկ ճանապարհ է, նաեւ Մեսափի ուղու վերականգնման նախագծի գլխավոր մասերից մեկը»: Լրացնելով գործընկերոջը, Հեյդար Ալիեւը հայտնեց, որ «ՏՐԱՍԵԿԱ կամուրջը թույլ կտա խորացնել վրաց-ադրբեջանական տնտեսական հարաբերությունները, ընդլայնել Հարավային Կովկասի, Եվրոպայի եւ Միջին Ասիայի պետությունների առեւտրա-տնտեսական կապերը»:

Իսրայելա-պաղեստինյան բանակցություններում «էական առաջընթաց» է դիտվում

ԹԵԼ ԱՎԻՎ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթը չորեքշաբթի օրը հայտարարել է, որ իսրայելա-պաղեստինյան բանակցություններում «էական առաջընթաց» է դիտվում: Երեքշաբթի վերահսկիչ անցակետում Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի եւ Պաղեստինի ղեկավար Յասեր Արաֆաթի հետ կայացած հանդիպման արդյունքների վերաբերյալ նա միեւնույն ժամանակ հայտարարել է, որ «դեռ շատ բան կա անելու»: Օլբրայթը հաստատել է, որ ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի, Նաթանյահուի եւ Արաֆաթի հետ եռակողմ բանակցությունները կկայանան հոկտեմբերի 15-ին: Երեքշաբթի բանակցությունները շարունակվել են մի քանի ժամ: Օլբրայթը Արաֆաթին եւ Նաթանյահուին հնարավորություն է ընձեռել երկու ժամվա ընթացքում երես առ երես քննարկել հաշտության գործընթացը շարունակելու հարցերը: Դրանից հետո Արաֆաթը Իսրայելի վարչապետին եւ ամերիկացի հյուրին Գազայում ճաշի է հրավիրել: Այնուհետեւ մամլո ասուլիսում Օլբրայթն ընդգծել է, որ բանակցություններում ստեղծվել է «նոր մթնոլորտ՝ համագործակցության մթնոլորտ»:

ՀԱՐԾԱԽՈՒՅԶ

Եվրոպացիները վստահում են Քլինթոնին, մերժելով ամերիկյան կենսակերպը



Սեպտեմբերի 21-ին ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի 53-րդ նստաշրջանի բացման օրը, պետությունների ու կառավարությունների ղեկավարները ծափողջույններով դիմավորեցին ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնին չնայած «Մոնիկագեյթի» հետ կապված աղմուկին: Մոտավորապես նույնը կարելի է ասել Եվրամիության գլխավոր երկրների բնակչության դիրքորոշման մասին: Ֆրանսիայի սոցիալական հետազոտությունների ինստիտուտը Գերմանիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում եւ Մեծ Բրիտանիայում սեպտեմբերի 11-22-ը քվոտաների մեթոդով այդ երկրների բնակչության ներկայացուցչական ընտրությամբ անցկացրեց 4850 հարցազրույց, որոնց արդյունքները վկայում են, որ չնայած ամերիկացի անկախ դատախազ Քենեթ Սթարի սեպտեմբերի 17-ի մեղադրական զեկուցագրին, եվրոպացիների մեծ մասը դրականորեն է գնահատում Քլինթոնի գործունեությունը ԱՄՆ-ի նախագահի պաշտոնում: Ավելին, Մոնիկա Լեւինսկու գործի առնչությամբ ԱՄՆ-ում բարձրացված աղմուկը Եվրոպայում կարծես էլ ավելի է բարելավել Բիլ Քլինթոնի նկարագիրը: Թեեւ եվրոպացիներից շատերը Քլինթոնին հանդիմանում են Մոնիկայի հետ կապված հարցաքննության ժամանակ սկզբում ստած լինելու համար, այնուամենայնիվ, հարցման ենթարկված եվրոպացիների 71 տոկոսը դրական կարծիք է արտահայտել ԱՄՆ նախագահի վերաբերյալ: Գերմանացիների, ֆրանսիացիների եւ իտալացիների մեջ նրանց թիվը հասնում է նույնիսկ 80 տոկոսի:

Եվրոպացիներն ընդհանուր առմամբ դրվատանքով են արտահայտվել ԱՄՆ-ի հասարակարգի մասին: Այս հարցում ամենաթերահավատներն իսպանացիներն են, որոնց միայն 41 տոկոսն է դրական պատասխան տվել: Բացի իսպանացիներից եւ ֆրանսիացիներից, հիշյալ մյուս երեք երկրների բնակիչներն արտահայտվել են ԱՄՆ-ի հետ կապերի հետագա սերտացման օգտին: Անցկացված հարցումը ցույց է տվել [illegible], հանուր առմամբ ԱՄՆ-ի վերաբերյալ դրական վերաբերմունք են արտահայտում մեծ մասամբ բարձր եկամուտներ ունեցող եւ աջակողմյան հայացքների տեր անձինք: Եվրամիության հիշյալ 5 երկրներում, սակայն, բնակչության միայն 39 տոկոսն է նախընտրելի համարում ամերիկյան կենսակերպի, տնտեսական համակարգի ու մշակույթի ընդօրինակումը: Ամերիկյան ժողովրդավարությանը դրական գնահատական է տվել իսպանացիների եւ ֆրանսիացիների ընդամենը 27 տոկոսը: 5 երկրներում հարցման մասնակիցների 72 տոկոսը գտնում է, որ հարկավոր է «հնարավորին չափ հիշ ընդօրինակել» ամերիկյան մշակույթը: Հարցման արդյունքները վկայում են, որ եվրոպացիներն այնքան էլ լավ չեն հասկանում ԱՄՆ-ի նախագահի դեմ Մոնիկա Լեւինսկու գործի առնչությամբ բարձրացված աղմուկի իմաստը եւ Բիլ Քլինթոնի նախագահական գործունեությանը դրական բնութագիր են տալիս նրա բանիմաց[illegible] համար:

Ռ. Ա.

digitised by A.R.A.R.@

ԳՐԱԿ

Մշակույթ

Սոս Սարգսյանը դժգոհում է՝ բայց գործում

«Համազգայինին» հովանավորում է Մերժ Սարգսյանը

Յավոտ, պարտադրված եմ տվյալ նյութը սկսել Սոս Սարգսյանից հետեւյալ մեջբերմամբ... «Մինչեւ վերջերս մեզ (խոսքը «Համազգային» թատրոնի մասին է-Ա. Ղ.) հովանավորել է Համազգային մշակութային կենտրոնը: Վերջին մեկուկես տարվա ընթացքում գործերը լավ չէին: Արդեն չորս ամիս է, ինչ օգնությունը ընդհանրապես դադարել է: Շատ անտարբեր վերաբերմունք ունի նաեւ ՀՅԴ հայաստանյան գերագույն մարմինը: Համոզված եմ, որ այնուամենայնիվ Համազգայինի կենտրոնական վարչությունն ի զորու է պահել մեկ թատրոն: Բայց մենք մեր անունը կպահենք: Այսօր թատրոնի պայմանները սնկա-առնետային են: Անձրեւների հետ մեկտեղ սկսվում են մեր սեւ օրերը՝ դույլեր եւ այլն: Այսօր մեզ հովանավորում է Մերժ Սարգսյանը»:

Այսպիսի տխուր նախաբան... մինչդեռ հարկ էր կարեւորել մեկ այլ տխուր իրողություն: Վերջին տասը տարիների ընթացքում «Համազգային» թատրոնը ըստ էության միակն է, որ հյուրախաղերով հանդես է եկել Լեռնային Ղարաբաղում: Այն էլ միայն վերջերս սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 4-ը: Նման պայմաններում եւ մշակութային հաղորդակցության նման դրսեւորման պայմաններում (այսինքն նման հաղորդակցություն չկա), ինչ ինտեգրացիայի մասին կարելի է խոսել:

Հոկտեմբերի 5-ին Սոս Սարգսյանը ուղղակի հարկադրված էր հրավիրել լրագրողներին, քանզի մեծ էր այն հակադրությունը, որն առկա է ներկայիս գերակայող արժեքների եւ թատրոնի գործունեության միջեւ: Այս մասին խոսելը, ըստ էության, կենսաբանական անհրաժեշտություն է: «Ես խիստ բացասական վերաբերմունք ունեմ ՀՀ կառավարության կողմից ցուցաբերված այն նախաձեռնության հանդեպ, որի համաձայն հանրապետության թատրոնները մոտ ապագայում վերածվելու են փակ ընկերությունների: Այսօր շատերը խաղում են բնակչության պարզունակ բնազդների վրա, ներկայացնելով համապատասխան արտադրանք: Մինչդեռ թատրոնը պետք է դաստիարակող լինի: Կարծում եմ, կառավարության նման նախաձեռնությունը ավելորդ գլխացավանքից ազատվելու միջոց է», ասաց «Համազգային» թատրոնի գլխավոր ռեժիսորը:

Մեր այն հարցին, թե արդյոք կարելի՞ է որոշակի հատուցում ընկալել իր նշանակումը թատերական ինստիտուտի ռեկտորի պաշտոնում, Սոս Սարգսյանը պատասխանեց իր վճռական «ոչ»-ով:

Լեռնային Ղարաբաղի բնակչությունը, որն անսքող լուրջ մշակութային միջոցառումների քաղց է զգում, ուղղակի հուզված էր հյուրախաղերից: Թատերախումբը այցելել է ԼՂՀ գրեթե բոլոր շրջանները, եղել է նաեւ զորամասերում: Թատրոնից զինակոչված երեք դերասան եւ մեկ նկարիչ այսօր աշխատում են Ղարաբաղում գործող միակ Ստեփանակերտի թատրոնում: Նրանք նույնպես ներգրավված էին «Համազգայինի» ղարաբաղյան հյուրախաղերում: Հյուրախաղերը ըստ Սոս Սարգսյանի, հնարավոր դարձան Մերժ Սարգսյանի եւ ԼՂՀ մշակույթի նախարար Արմեն Սարգսյանի օժանդակության շնորհիվ: Սարգսյանների յուրահատուկ եռիխնություն: Շրագիրը մշակված էր դեռ վաղուց, սակայն չէր իրականացվում, քանզի «Արմեն Սմբատյանը կարծես թե տիկին էր» (Սոս Սարգսյան):

Մեկուկես շաբաթվա ընթացքում թատրոնը ներկայացրել է 13-14 գործ եւ կոմերցիոն խնդիր չի հետապնդել:

Նոյեմբերի սկզբներին «Համազգայինը» կներկայանա երկու նոր գործերի բեմականացմամբ, իսկ ինչ կլինի հետո՝ ցույց կտա ժամանակը:

ԱՐԻՍ ՂԱՋԱՐՅԱՆ

Մազոխիստ Խանջյանը բախտավոր է...

Քննարկման էր դրված Գուրգեն Խանջյանի «Սվերներ խամաճիկների փողոցում» գիրքը: Ռաֆայել Նահապետյանը, օրինակ, վերջինիս համարում է բախտավոր գրող, քանզի նրան հնարավոր չէ մոտենալ ծեծված ձեւակերպումներով. Գուրգեն Խանջյանի գրականությունը կամ լավն է կամ վատը: Միջին չկա: Արտաշես Ղազարյանի կարծիքով, Խանջյանը շատ ազգային եւ արդի արձակագիր է, անկախ է այն բանից, որ Կաֆկայի կամ Քամյուի ոճերը հեռացնում են իրեն:

Գուրգեն Խանջյանին համեմատում են շատերի հետ: Ոչ միայն Կաֆկայի կամ Քամյուի, այլեւ Հյուգոյի եւ Դոստոեւսկու հետ: Միշել Փոլարանը, օրինակ, ասում է... «Ես պատմվածքներին չեմ հավատում: Ինձ համար Գուրգեն Խանջյանը մեծ փիղասան է: Նա ունի հանճարարական եւ իր խնդիրը սկսելու մեջ է: Վիկտոր Հյուգո կա նրա մեջ: Բայց նա պետք է ազատվի մազոխիստությունից»:

Արգար Ափինյանի կարծիքով, ինքնարկվող գիրքը լավագույնն է Գուրգեն Խանջյանից. «Գրողի ստեղծագործական կենսագրության առաջին փուլն ավարտված է: Նրա գրականությունը նորություն է: Նա հայր չունի հայ գրականության մեջ»: Եվ ապա Բախտինից...

«Դոստոեւսկին կործանում էր հերոսի կերպարի ամբողջականությունը»:

Գրականության սեփականության մասին. ո՞վ է նրա տերը... ստեղծագործողը, թե՞ ընթերցողը: Վարդան Ջալոյանն, օրինակ, ասում է. «Ես եմ գնել այս գիրքը, ուստի եւ մեկնաբանությունը պատկանում է ինձ: Ոնց ուզեմ, կարող եմ կարդալ»: Գուրգեն Խանջյան... «Բայց դու չես կարող ոնց ուզելով կարդալ: Անկախ քո կամքից դու պետք է կարդաս աջից ձախ եւ սկզբից վերջ»:

Եվ ապա աշխուժացում. Սամվել Սկրտչյան. «Անիմաստ է այս ամենը քննարկելը: Շատերը կարող էին ուղղակի հանդես գալ գրախոսականներով: Ես համաձայն չեմ Արգար Ափինյանի հետ. ի՞նչ է ասել, որ նա հասել է երկրորդ փուլի: Ո՞վ կարող է իսկական գրողի հետ սահմաններ կառուցել»:

Վահան Վարդանյանի կարծիքով, Խանջյանի առանցքային հերոսը սվում է մեր առջեւից եւ նրա զոհաբերությունները անհրաժեշտ է ընկալել ըստ այդմ: Հերոսը պատրաստ է զոհաբերել իր մեջ եղած արժեքները միայն թե սերունդ փրկի: Կարիք չկա խճճվել բարդունակությունների մեջ: Կառլոս Եղիազարյանը նշում է. «Խանջյանը ոչ թե դաժան ճշմարտություն է ասել, այլ ասել է ճշմարտության դաժանությունը»:

Ինչեւէ. մեզանում լույս է ընծայվել մի գիրք, որը չի կարող անտարբեր թողնել իսկական ընթերցողին: Եվ ճշմարիտ է Ռաֆայել Նահապետյանը, ասելով, որ Գուրգեն Խանջյանը բախտավոր գրող է:

Ա. Ղ.

ՊԱՏ

Կանգ առ, ակնթարթ...

...Այդ կրկին խավար ու մութ
Եվ խավարի մեջ լայնարձակ,
Արեւածագ, արեւամուտ,
Արեւամուտ, արեւածագ՝
ժամանակի հասկացություն,
Ազնվության նոր գաղափար՝
Մանրէների հավակնություն
Մամուռների հավերժաղար:

Մերժ Ավետիսյան. «Հայերը պետք է կարողանան ծիծաղել իրենց արատների վրա»

Հոկտեմբերի 1-11-ը Փարիզի մերձակա Բանյո քաղաքում անցկացվում է մշակութային փառատոն, որը նվիրված է Բանյո եւ Վանանոր քաղաքների եղբայրացման 30-րդ տարեդարձին: Փառատոնի ընթացքում անցկացվում են գեղանկարչական ցուցահանդես, թատերական ներկայացում, երաժշտական, պարային միջոցառումներ եւ կինոցուցադրումներ: Փարիզում ՀԲԸՄ տեղեկագրում տպագրվել է հարցազրույց Ֆրանսահայ անվանի կինոբեմադրիչ Մերժ Ավետիսյան հետ, որ ստորեւ ներկայացնում ենք կրճատումներով:

– Կարո՞ղ եք համառոտակի բնութագրել փառատոնը եւ մեզ ներկայացնել դրա ընթացքում «Հայկական ծագումով երիտասարդ կինոգործիչների հանդիպումներում» ցուցադրվող ձեր երկու ֆիլմերը:

– Բանյոյի քաղաքապետարանը ձգտում էր այս տարեդարձը նշել հայկական մշակույթի հնարավորին չափ լայն ծրագրով: Ես հավանություն տվեցի ինձ ներկայացրած նախագծին: Ինչ վերաբերում է կինոարվեստին, ես ընտրեցի հայկական ծագումով երիտասարդ կինոգործիչների, որոնց ֆիլմերը կազմված են սփյուռքի կամ բուն Հայաստանի հետ: Մասնավորապես Աստղ Էգոյանը ներկայացնում է անգլո-սաքսոնական կինեմատոգրաֆիական մտայնությունը զուտ հայկական զգացմունքայնությամբ: «Օրացույց» ֆիլմը գրեթե ամբողջովին նկարահանված է Հայաստանում եւ արդարացի հարցեր է առաջադրում հումորի զգացումով: Ցուցադրվում են նաեւ մուլտֆիլմեր: Ֆրանսիայի եւ առհասարակ սփյուռքի հայ երեխաները որպես կանոն տեղյակ չեն, որ այդ արվեստը բավական երկար ժամանակ բուռն զարգացում է ապրել Հայաստանում: Ռոբերտ Սահակյանցը նշանակալի գործեր է ստեղծել:

Անձամբ ես «Լաբիրինթոս» ֆիլմի պրոդյուսերն եմ: Դա իմ միակ ֆանտաստիկ լիամետրաժ ֆիլմն է, որը 35 մմ-անոց ժապավենի վրա նկարահանվել է հայաստանցի կինոգործիչների ուժերով, չհաշված ինձ եւ Նորա Արմանիին: Երիտասարդ կինոբեմադրիչ Միքայել Դովլաթյանի այդ ֆիլմը փոքր-ինչ առեղծվածային է, բայց խորությամբ արտացոլում է վերջին տասը տարիներին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները: Ես ձգտել եմ ներկայացնել իմ կինեմատոգրաֆիական գործերի գլխավորապես կատակերգական դրսեւորումները: Արդեն վաղուց ես մտածում եմ, որ հայերը, այդ թվում՝ ֆրանսահայերը, պետք է կարողանան ծիծաղել իրենց արատների վրա: Դրա օրինակը Կյուլեճյանի կերպարի ստեղծումն է իմ երեք ֆիլմերում: Ինչ վերաբերում է իմ «Կատարված առաքելություն» ֆիլմին, ես այն նկարահանել եմ Պորտուգալիայում, կովկասյան մի անեկդոտի հիման վրա: Գտնում եմ, որ վերջին տարիներին իմ ստեղծած ֆիլմերի մեջ այդ չորսն առավել ուղղակի են առնչվում հայկական մշակույթին:

Ինչ վերաբերում է մյուս արվեստներին, Բանյո քաղաքը գեղանկարչական ցուցահանդեսի համար ընտրել է Փափազի գործերը: Ռիչարդ Կալինոսկու «Գազանը լուսնի վրա» թատերգության մասին արդեն շատ է խոսվել եւ դեռ կխոսվի: Դա ցույց է տալիս, որ արվեստի գործերը պետք է դրսում շրջեն եւ վերադառնան հայերի մոտ՝ որպես օտարների կողմից նրանց մշակույթի յուրօրինակ ճանաչման ապացույցներ, որպեսզի այնուհետեւ հայերը կարողանան ավելի լավ ըմբռնել դրանք: Չխոսելով պիեսի բարձր որակի մասին, նախաձեռնությունն ինքնին կարեւորվում է նրանով, որ հայերի մասին խոսվում է անուղղակի միջոցներով:

– Հայաստանի անկախացումը փոխե՞ց արդյոք հայկական կինոյի նկարագիրը: Ձեր կարծիքով սփյուռքը ներկա փոփոխուն ժամանակաշրջանում ինչպիսի՞ դեր պետք է խաղա Հայաստանի կինոարվեստի զարգացման մեջ:

– Հայաստանի անկախացումից առաջ՝ 80-ական թթ. տարեկան արտադրվում էր 10-11 ֆիլմ, չնայած հայկական կինոարվեստը համեմատաբար ներփակված էր: Անկախացումից ի վեր խոս է տիրում: Պետությունն այլեւս միջոցներ չի հատկացնում, բայց Հայաստանը որոշել է ամեն գնով պահպանել կինոստուդիան՝ էժան վաճառելու փոխարեն: Դա ինձ ճիշտ է թվում: Ես առաջարկություն եմ արել, որ սփյուռքի հայերը եւ ֆրանսիացիները բաժնետիրական հիմունքներով կարողանան մասնակցել հայկական կինոֆիլմերի ստեղծմանը: Հայրենակիցներիս օգնելու համար ես ֆինանսավորեցի «Լաբիրինթոս» ֆիլմի նկարահանումները:

Վերջին 7-8 տարիներին հայկական միայն ֆիլմեր են նկարահանվել, բայց այս ոլորտում զարգացումն ակնհայտ է: Առաջվա ծանր սարքավորումների փոխարեն հայերն սկսել են աշխատել պրոֆեսիոնալ կինոխցիկներով: Հիմնվել են մասնավոր ընկերություններ, որոնցից են «Պարադիզը» եւ «Շարմը»: Իմ նոր լիամետրաժ ֆիլմի ստեղծմանը մասնակցում է «Պարադիզ» ֆիրման: Հայաստանում, Ֆրանսիայում, Պորտուգալիայում եւ Բելգիայում նկարահանվելիք այդ ֆիլմին հայերը մասնակցում են թե որպես դերակատարներ եւ թե որպես ներդնողներ:

Այսօր «Հայֆիլմ» կինոստուդիան սկսել է կայունանալ, նկարահանումները կանոնավորվում են, վիճակը բավական լավ է նաեւ մասնավոր կինոստուդիաներում: Վերջում կուզեի ասել, որ «Պարադիզ» եւ «Շարմ» ֆիրմաների տեսաժապավենների ու կասետների վաճառահանման առնչությամբ գտնվում է Լոս Անջելեսում:

digitised by A.R.A.R.@

ՇԱԽՄԱՏ

Այժմ պետք է հաղթել

Գագիկ Հովհաննիսյանը հաղորդում է Էլիստայից

Շախմատի 33-րդ համաաշխարհային օլիմպիադայի 8-րդ տուրը, որում Հայաստանի տղամարդկանց հավաքականը հանդիպում էր Ռուսաստան-2 թիմի հետ, անհաջող դասավորվեց մեր գրոսմայստերների համար: Կարեն Ասրյանը, որը փոխարինել էր փորձառու Արսաշես Մինասյանին, սկզբնախաղում անճշտություն թույլ տվեց Շուրի հետ պարտիայում եւ երկարատեւ պայքարից հետո պարտվեց: Ռաֆայել Վահանյանը, հանդիպելով Ֆիլիպովի հետ, փորձեց զինվորի գնով սուր գրոհ ծավալել մրցակցի արքայի դեմ: Իրականացնել այդ ծրագիրը չհաջողվեց, եւ, չնայած համառ դիմադրությանը, մեր առաջատարը տանուլ տվեց: Սմբատ Լպուտյանը մեկ զինվոր ավելի ուներ Կոբալիայի դեմ, բայց մրցակիցը կարողացավ քայլերի կրկնությամբ հաշտություն պարտադրել: Սա առաջին կես միավորն է, որ Լպուտյանը կորցրեց այս օլիմպիադայում: Միայն Վլադիմիր Հակոբյանը հաղթանակ տարավ՝ եռանդուն խաղով վճռական առավելության հասնելով Եմելինի նկատմամբ: Այսպիսով, մեր թիմը պարտություն կրեց 1,5-2,5 հաշվով:

Ցանկացած պարտություն տհաճ է ու անցանկալի, բայց մեծ ողբերգություն պետք չէ սարքել: Առաջատարների խմբում հավակնածները այնքան խիտ են դասավորված, որ վստահ անցկացված յուրաքանչյուր մրցախաղ կարող է էապես բարելավել իրավիճակը: Այս առումով շատ կարեւոր է իններորդ տուրը, երբ Հայաստանի ներկայացուցիչները կհանդիպեն Բելառուսի հավաքականի հետ: Այս մրցախաղում հանդես չեն գան նախորդ օրը պարտություն կրած Վահանյանն ու Ասրյանը, եւ կազմը կլինի այսպիսին. Լպուտյան, Հակոբյան, Մինասյան, Անասասյան:

Սմբատ Լպուտյան

Մեր աղջիկները 1,5-1,5 խաղացին բուլղարուհիների հետ: Հաղթությանը պարտվեց, Սկրտչյանը հաղթեց, իսկ Աղինյանը ոչ-ոքի խաղաց: Հայաստանի հավաքականը 13,5 միավորով բաժանում է 19-26-րդ տեղերը: Այժմ հետաքրքրությամբ է սպասվում իններորդ տուրը, երբ կհանդիպեն Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչները: Մեր թիմը պատրաստվում է կրկին հանդես գալ առանց գրոսմայստեր Դանիելյանի, այսինքն նախորդ օրվա կազմով:

Առաջատարների խումբը

8 տուրից հետո

Տղամարդիկ

1. ԱՄՆ	22
2. Ռուսաստան-1	21,5
3. Բուլղարիա	21,5
4. Ֆրանսիա	21
5. Անգլիա	21
6. Ռուսաստան-2	21
7. Չեխիա	20,5
8. Հայաստան	20
9. Ուկրաինա	20
10. Գերմանիա	20

Կանայք

1. Չինաստան	20
2. Ռումինիա	16,5
3. Հոլանդիա	16
4. Ռուսաստան-1	16
5. Վրաստան	16

ՖՈՒՏԲՈԼ

ՈՒԵՖԱ-ն փոխում է եվրագավաթների մրցումների անցկացման կարգը

Ֆուտբոլային ասոցիացիաների եվրոպական միությունը (ՈՒԵՖԱ) կարեւորագույն որոշումներ կայացրեց: Նախ մի քանի օր առաջ Ժնեւի «Նոգա Հիլթոն» հյուրանոցում անցկացված նիստում ՈՒԵՖԱ-ի ղեկավարները հանդիպեցին տարբեր երկրների ուժեղագույն ակումբների ներկայացուցիչների հետ: Խոսվեց եվրագավաթների խաղարկությունում փոփոխություններ մտցնելու մասին: Այդ վերակառուցումները ուղղված են այսպես կոչված սուպերլիգա ստեղծելու գաղափարի դեմ: Եվրոպական միությանն օգնության հասավ նաեւ ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) նախագահ Ժոզեֆ Բլաստերը, որը պաշտպանեց, որ սուպերլիգային մասնակցած ակումբների ազգային ասոցիացիաները կորակազրկվեն:

Այնուհետեւ Լիսաբոնում կայացավ ՈՒԵՖԱ-ի գործադիր կոմիտեի նիստը: Եվրագավաթների մրցումներում կատարված փոփոխությունների մասին հայտարարեց միության նախագահ Լենարտ Յոհանսոնը: Այսուհետեւ Գավաթակիրների գավաթի եւ ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունները կձուլվեն, ու նոր մրցաշարն առայժմ պայմանական «Pro Cup» անունն է կրում: Չեմպիոնների լիգան կընդարձակվի. այստեղ 24-ի փոխարեն կընդգրկվեն աշխարհամասի 32 առաջատար ակումբային թիմեր: Նրանք նախ կմրցեն 8 խմբերում, որոնցում հաջող հանդես եկած երկուական թիմերը կշարունակեն պայքարը 4 խմբերում, այստեղ էլ առաջին եւ երկրորդ տեղերը գրաված թիմերը (ընդհանուր առմամբ 8) այնուհետեւ օլիմպիական մրցակարգով կորոշեն ուժեղագույնին:

Նախատեսվում է, որ եվրագավաթների վերակազմավորումը լրացուցիչ եկամուտ կբերի, իսկ ընդհանուր մրցանակային հիմնադրամը կկազմի 500 մլն դոլար, որից յուրաքանչյուր մրցաշարի հաղթողը՝ 60-80 մլն դոլար կստանա: Ի դեպ, սուպերլիգայի ստեղծման ջատագովները խոստանում էին, որ իրենց բյուջեն երկու անգամ ավելի կլինի:

Եվրոպական ակումբների ներկայացուցիչները հավանություն տվեցին ՈՒԵՖԱ-ի գործադիր կոմիտեի որոշումներին, իսկ առաջին դրական արձագանքները Իսպանիայից եւ Իտալիայից եղան: Միայն Մադրիդի «Ռեալի» նախագահ Լորենցո Սանսը դժգոհություն արտահայտեց: Հայտնի է, որ նա պայմանագրով կապված է սուպերլիգա նախաձեռնած մագնատների հետ:

Ավելացնենք, որ լիսաբոնյան գործկոմի որոշումները պետք է հաստատվեն ՈՒԵՖԱ-ի արտահերթ կոնգրեսում, որը կանցկացվի Երուսաղեմում, դեկտեմբերի 10-11-ը:

Պորտուգալիայի մայրաքաղաքում տեղի ունեցած նիստի ժամանակ որոշվել են նաեւ 1998-99 թթ. մրցաշրջանի եվրագավաթների եզրափակիչ խաղերի անցկացման վայրերն ու ժամկետները: Այսպես, ՈՒԵՖԱ-ի գավաթի վճռական խաղը կկայանա մայիսի 12-ին, Մոսկվայում, «Լուժնիկիի» մեծ մրցաստադիոնում: Դրա համար Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովը հատուկ նամակով դիմել էր Եվրոպական միության ղեկավարությանը՝ երաշխավորելով մրցախաղի տեխնիկական անհրաժեշտ ապահովումը: Գավաթակիրների գավաթի խաղարկության եզրափակիչը տեղի կունենա Բիրմինգեմի «Վիլլա պարկ» մարզադաշտում, մայիսի 19-ին: Եվ, վերջապես, Չեմպիոնների լիգայի ուժեղագույնը կորոշվի Բարսելոնի «Նոու կամպ» մարզադաշտում, մայիսի 26-ին կայանալիք խաղում:

Իհարկե, ՈՒԵՖԱ-ի եւ Գավաթակիրների գավաթների խաղարկությունները վերջինները կլինեն:



ՍՓՅՈՒՌՔ

Մարզիչ Նալբանդյանը լավագույններից մեկն է

Այս հոդվածում պատմվում է, իհարկե, ոչ բոլոր ամերիկահայ մարզիչների մասին, որոնք արժանի են լավագույնի կոչմանը: Վերջերս Նյուփորթի բիլիարդներում արժանին էին մ ատուցում խաղացող մարզիչ եւ թիմի ավագ Ջին Նալբանդյանին, որը 50 եւ ավելի տարիք ունեցողների թիմ է հավաքել եւ այն հասցրել է մինչեւ ազգային եզրափակիչ: Նրանք տանուլ են տվել ընդամենը մի խաղում, որն ամենաուժեղներից էր մրցաշարի ողջ պատմության մեջ:

Նալբանդյանի թիմը, որը գրանցված է Միացյալ Նահանգների բենիսի ասոցիացիայի Հարավային Կալիֆոռնիայի մասնաճյուղում, արդեն հասցրել է պարտության մատնել Հարավային Կալիֆոռնիայի լավագույն թիմերին: Թիմը մասնակցել է Միացյալ Նահանգների ազգային մրցաշարին, որը տեղի ունեցավ Փալմ Սփրինգսի Ռիվերա ռաֆթ ակումբում, որտեղ 50 եւ ավելի տարիք ունեցողների 25 լավագույն թիմերի մեջ գրավել է առաջին տեղը՝ պարտության մատնելով նույնիսկ Միացյալ Նահանգների խառնակի չեմպիոն Վոթերինգ Հոուլ թիմին՝ Արիզոնայից: Թիմը հոյակապ մարզավիճակում պահելու ու ազգային եզրափակիչ հասցնելու համար Նալբանդյանի պարգեւատրման արարողության ժամանակ կազմակերպիչներից մեկը նրան անվանեց հայ 3 լավագույն մարզիչներից մեկը՝ ֆուտբոլի լեգենդ Արա Բարսեղյանի եւ բասկետբոլիստ Ջերրի Թարխանյանի կողքին: Մարզասերները հոսնկայս ծափահարեցին մարզչին՝ թիմին այսքան կարճ ժամանակահատվածում ազգային եզրափակիչ հասցնելու համար: Իսկ աշխարհի չեմպիոնի կոչումից թիմը զրկվել է միայն Ավստրալիային պարտվելով:

Թենիսի վարպետների կարծիքով թիմի հաջողության գաղտնիքը յուրօրինակ հարձակողական խաղն է, իսկ մարզիչի կարծիքով, իր թիմի հաջողությունը բացատրվում է գնդակին հասկանալու ու կառավարելու իր շնորհով եւ բեյսբոլի ատպարեզում կուտակած փորձով:

Ջին Նալբանդյանը ծնվել է Ֆրեզնոյում: Ֆրեզնոյի պետական համալսարանում սովորելու տարիներին նա խոստումնալից բեյսբոլիստ էր: Ավարտելուց հետո զբաղվել է պրոֆեսիոնալ բեյսբոլով Չիկագո Քաբս ակումբում, ավելի ուշ՝ 1960-ականներին մի քանի տարի մարզել է UCLA Բրյուինս թիմը:

Նալբանդյանը Հարավային Կալիֆոռնիայի բենիսի աշխարհում հայտնի է իր ազատ եւ ուժեղ խաղով, ինչը իր իսկ խոսքերով ասած, նրա բեյսբոլային անցյալի արդյունքն է:

«Արմինյան Միրոր-Սփեքթեյթոր»-ից թարգմանեց Ռ. ԱԴԻՅԱՆԸ

Հերթական ռեյտինգ-ցուցակը

Հրատարակվել է աշխարհի ուժեղագույն բենիսիստների դասակարգման հերթական ցուցակը: Մարզասերների ուշադրությանն ենք ներկայացնում տղամարդկանց եւ կանանց առաջին տասնյակները:

Տղամարդիկ

1. Փիթ Սամփրաս (ԱՄՆ)՝ 4015 միավոր, 2. Պատրիկ Ռաֆթեր (Ավստրալիա)՝ 3575, 3. Մարսելո Ռիոս (Չիլի)՝ 3467, 4. Կառլոս Մոյա (Իսպանիա)՝ 2962, 5. Պետր Կորդա (Չեխիա)՝ 2815, 6. Կարոլ Կուչերա (Սլովակիա)՝ 2709, 7. Ալեխս Կարեռնա (Իսպանիա)՝ 2572. 8. Անդրե Ագասի (ԱՄՆ)՝ 2545, 9. Ռիխարդ Կրայչեկ (Հոլանդիա)՝ 2534, 10. Եվգենի Կաֆելնիկով (Ռուսաստան)՝ 2508 միավոր:

Կանայք

1. Մարտինա Հինգիս (Շվեյցարիա)՝ 5496, 2. Լինդսեյ Դեւենպորտ (ԱՄՆ)՝ 5470, 3. Յանա Նովոտնա (Չեխիա)՝ 4819, 4. Արանտա Սանչես-Վիկարիո (Իսպանիա)՝ 3743, 5. Վենուս Ուիլյամս (ԱՄՆ)՝ 3015, 6. Մոնիկա Սելես (ԱՄՆ)՝ 2855, 7. Կոնչիտա Մարտինես (Իսպանիա)՝ 2404, 8. Նատալի Տոզյա (Ֆրանսիա)՝ 2301, 9. Պատրիսիա Շնայդեր (Շվեյցարիա)՝ 2274, 10 Անանդա Կյոթցեր (ՀԱՀ)՝ 1963 միավոր:

Խաղում է աշխարհի ուժեղագույն բենիսիստուհի Մարտինա Հինգիսը:

ՀԱՄԱՌՈՏ

Հոլանդուհու հաղթանակը

Հոլանդիայի Մասսթրիխթ եւ Վալկենբերգ քաղաքներում շարունակվում է խճուղային հեծանվավազքի աշխարհի առաջնությունը: Կանանց 23 կմ անջատ մեկնարկով մրցումներում առաջին տեղը գրավեց եւ աշխարհի չեմպիոնուհու տիտղոսին արժանացավ Լեոնտեն վան Մորսելը (Հոլանդիա): Նա մրցաշրջանը անցավ 31 րոպե 51 վայրկյանում: Հաղթողի կոչման հիմնական հավակնորդուհիներից մեկը՝ օլիմպիական չեմպիոնուհի Զուլֆիա Զաբիրովան (Ռուսաստան) ետ մնաց ընդամենը 0,37 վայրկյանով եւ երկրորդ տարին անընդմեջ արծաթե մեդալ նվաճեց: Երրորդ մրցանակակիր դարձավ Հանկե Կուտկերնագելը (Գերմանիա):

Ոգեւորեց հայրենակիցը

Շվեյցարիայում սկսված սուպերամարտի առաջնությունում հանդես են գալիս 70 երկրների 500 մարզիկ-մարզուհիներ: Արդեն խաղարկվել են առաջին մեդալները: Տղամարդկանց անհատական մրցումներում խոցասուսեր մրցածեւի եզրափակիչում հանդիպեցին երիտասարդ Յուկ Օբրին (Ֆրանսիա) եւ խոշոր մրցումների մեծ փորձ ունեցող Պետեր Վանկեն (Շվեդիա): Համառ պայքարում 15-13 հաշվով հաղթեց Ֆրանսիայի ներկայացուցիչը: Հավանաբար, նրան ոգեւորեց նշանավոր գեղասահորդ Ֆիլիպ Կանդելորոյի ներկայությունը, որը առաջնություն է հրավիրված որպես պատվավոր հյուր: Ճկասուսերակիրների վճռական մենամարտում նույնպես 15-13 հաշիվ գրանցվեց: Հաղթեց եւ երկրորդ տարին անընդմեջ աշխարհի չեմպիոնի կոչումը նվաճեց Սերգեյ Գոլուբիցկին (Ուկրաինա): Արծաթե մեդալակիր դարձավ եզրափակիչում նրա մրցակից Էլվիս Գրեգորին (Կուբա):

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքով

ՏԱՐԱՇՇԱՐՁԱԿ

Թուրք-սիրիական լարվածությունը վերածվում է աղակայունացման մշտական գործոնի

Սկիզբը էջ 1

Ինչպես հայտնի է, սեպտեմբերի կեսերին ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթը Թալաբանին ու Բարզանին հրավիրել է Վաշինգտոն, վերջիններիս իրար հետ հաշտեցրել Լոնդոնը ընտրելով ինքնավարության բանակցությունների վայր: Մինչ այդ բանակցություններն Անկարայում էին վարվում:

Օլբրայթն այդ քայլով Հյուսիսային Իրաքի խնամակալությունն Իրաքից վերցրել ու հանձնել է Անգլիային, անտեսելով Անկարայի կարծիքը: Այսինքն, մինչ թուրք-սիրիական լարվածության սումը Ս. Նահանգներն իր նախաձեռնությամբ Հյուսիսային Իրաքում ռազմա-քաղաքական իրավիճակի սման նախադրյալներ ստեղծել էր: Քանի որ քրդական ինքնավարության բանակցությունները Անկարայից Լոնդոն են փոխադրվում, ուստի եւ Թուրքիան կանգնել էր Հյուսիսային Իրաքի գործընթացներից օտարման փաստի առջեւ: Ինչքան էլ Չիլլերը Մեջլիսի ամբիոնից հայտարարի, թե «Հյուսիսային Իրաքում որեւէ գործընթաց առանց Թուրքիայի մասնակցության ձախողման է դատապարտված», միեւնույն է, այդ գործընթացը որպես ռազմա-քաղաքական իրավիճակի սման միջոց ծառայում է նպատակին: Դեռ ավելին, տելով թուրք-սիրիական լարվածությունը, նույն նպատակին է ծառայում հենց ինքը Թուրքիան, այն տարբերությամբ, որ ռազմա-քաղաքական իրավիճակն առդեն տվում է ոչ միայն Հյուսիսային Իրաքի, այլեւ Մերձավոր եւ Միջին Արեւելքի մասնաբներով:

Համենայն դեպս, մինչ Մեջլիսի դռնփակ նիստը Թուրքիայում գումարվեց նախարարների խորհրդի նիստ: Վարչապետ Մեսութ Յըլմազը նիստում մասնավորապես ասաց. «PKK-ի ահաբեկչական գործունեության հետեւանքով, որն անմիջականորեն հովանավորվում է Սիրիայի կողմից, վերջին 14 տարիների ընթացքում սպանվել է շուրջ 30 հազար մարդ: Սպանվածների թվում են 3 հազար 400 կին եւ երեխա, 4 հազար 600 անվտանգության ուժերի ներկայացուցիչներ: Մենք շարժվում ենք Աթթուրքի «Խաղաղություն երկրի ներսում, խաղաղություն աշխարհում» սկզբունքով: Բոլորովին չէի ցանկանա, բայց անհրաժեշտության դեպքում Մեջլիսից ռազմական գործողությունների լիազորություններ եմ խնդրելու»: Ըստ «Սաբահի», Յըլմազը նախազգուշացրել է նախարարներին, ասելով. «Բանակը պատրաստ է, դուք էլ պատրաստվեք»:

Ինչ վերաբերում է թուրքական մյուս թերթերին, դրանք եւս հոկտեմբերի 8-ին իրենց ուշադրությունը կենտրոնացրել էին նախարարների խորհրդում Յըլմազի ելույթի, Մեջլիսի դռնփակ նիստի, այդ թվում նաեւ թուրք-սիրիական լարվածության հարցում թուրքական բանակի հրամանատարության տեսակետների վրա: «Սիլիեթը» հոկտեմբերի 8-ի համարում գրում է. «45 օրվա ժամկետ Դամասկոսին»: «Ենի Յուզյըլի» կարծիքով, Յըլմազը Սիրիային 10 օրվա ժամկետ է հայտնում եւ պահանջում, որ քրդական ահաբեկչության հարցում արմատապես վերանայի իր դիրքորոշումը: Եթե Սիրիան 10 օրվա ընթացքում ընդառաջ չգնաց Թուրքիայի պահանջներին, ապա ռազմական գործողությունը նրա դեմ, «Ենի Յուզյըլի» տվյալներով, անխուսափելի են դառնում: Ինչ վերաբերում է «Ռադիկալին», ապա թուրք-սիրիական լարվածությունը լուսաբանում է հետեւյալ խորագրով. «Պատերազմ մի քիչ ուշ. Ոչ Դամասկոսի կոնֆետը, ոչ էլ արաբի դեմը»: Ըստ «Ռադիկալի», թուրք գեներալներն ասել են. «Բլեֆ չենք անում, սահմանի մի ծայրից որ մտնենք, մյուս ծայրից դուրս կգանք»:

Ի դեպ, Սիրիա ներխուժելու այդ մտադրությունը թուրք գեներալների կողմից վերջին օրերին հաճախ են արտահայտվում: Օրինակ, նրանցից մեկը, ինչպես հոկտեմբերի 6-ին նշեց «Հյուրրիյեթը», առանց իր անունը հայտնելու, ընդգծել է. «Հարձակումն առավոտյան սկսելու դեպքում, կեսօրին կհասնենք Դամասկոս»: Հակառակ գեներալների ցանկություններին, թուրքական զորքերը հարձակման չանցան: Ուրեմն, Դամասկոս ներխուժել չեն կարող: Ըստ երեւույթին չեն էլ կարողանալու: Նաեւ հարձակվել, քանի որ օրերս պաշտոնական այցով պատրաստվում է Դամասկոս մեկնել Ռուսաստանի պաշտպանության նախարար Իգոր Սերգեեւը: Հիշեցման կարգով նշենք՝ 1992 թ. Թուրքիան մոտավորապես նույն սցենարով հարձակման սպառնալիքի տակ էր պահում Հայաստանին: Մարշալ Եվգենի Շապոշնիկովի այցը մեր հանրապետություն բավական էր, որ թուրքական սպառնալիքը, Թուրգութ Օզալի ռազմաշունչ հայտարարություններով հանդերձ, վերածվի բլեֆի: Թվում է, թե Իգոր Սերգեեւը Դամասկոսից կփորձի սաստել թուրքերին, եւ վերջիններս Սիրիայի վրա հարձակվելու փոխարեն նորից բլեֆով կբավարարվեն:

Սպառնալիքը միջպետական հարաբերություններում, ինչ խոսք, անընդունելի է: Ավելի քան անընդունելի է, երբ դա բլեֆի է վերածվում: Սակայն, անկախ սպառնալիքի բնույթից, աննախադեպ սվում են երկու հարեւան երկրների փոխհարաբերությունները, եւ այդ երկրների շուրջ համախմբվում են մյուսները: Այս պայմաններում խորանում է միջինարեւելյան երկրների բեւեռացումը: Դա իր հետ բերում է տարածաշրջանի աղակայունացում: Ինչքան էլ թուրքական սպառնալիքները բլեֆի տպավորություն գործեն, դրանք աղակայունացման առումով ոչ միայն նպատակին են ծառայում, այլեւ աղակայունացումը դարձնում են մշտական գործոն տարածաշրջանում:

UNITED NATIONS — NATIONS UNIES

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԼՐԱԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ՝ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

1992 թ. դեկտեմբերի 22-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 47/196 որոշմամբ հոկտեմբերի 17-ը հայտարարեց «Աղքատության վերացման միջազգային օր»: Օրվա նպատակն է հրապարակայնություն տալ աղքատության վերացման հարցին, հատկապես զարգացող ու անցման շրջանում գտնվող երկրներում, մի կարիք, որը զարգացման առաջնայնություն է դարձել 90 թ.-ից:

Հաշվի առնելով Հայաստանի զուտ մարդասիրական կոնտեքստից անցումը դեպի վերականգնում ու վերակառուցում, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի Զարգացման ծրագիրը հայտարարում է մրցույթ տպագիր մամուլի այն լրագրողների համար, որոնք իրենց հոդվածներով կանդրադառնան աղքատության հարցին եւ կլուսաբանեն առանձին հայ անհատների կողմից աղքատությունը հաղթահարելու համար նրանց հատուկ ջանքերը:

Ընտրված հոդվածները մինչեւ տարվա վերջ առանձին գրքույկով կհրատարակվեն, իսկ լավագույն հոդվածները կարժանանան մրցանակի (լրագրողական տեխնիկա եւ պիտույքներ):

Մրցույթը բաց է բոլոր տպագիր մամուլի լրագրողների համար: Կարելի է ներկայացնել ինչպես արդեն հրատարակված հոդվածներ, այնպես էլ այս առիթով հատուկ հետազոտված նյութեր: Հոդվածները չպետք է գերազանցեն 600 բառը, ու յուրաքանչյուր ներկայացվող գործ պետք է ներառի խնդրո առարկա անձի կամ անձանց պատկեր(ներ)ը:

Ձեր նյութերը կարող եք ներկայացնել ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակ (հասցեն՝ Կարլ Լիբկնեխտի 14) մինչեւ հոկտեմբերի 15-ը, ժամը 17:00-ը:

14 K. LIEBKNECHT Str., YEREVAN, ARMENIA

Tel.: 560-212; AT@T Tel/Fax: (3742) 151-647; E-mail: undpiarm@freenet.am

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

առանձնատուն, 80 քառ. մ. նկուղ ավտոնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել 27-22-57 *ժամը 10-16*, 58-33-26 *ժամը 18-23*

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

լորաբուծական ֆերմա փակ ցիկլով, ամսական 5000 լոր արտադրական ծավալով:

Հեռ.՝ 45-44-56

Robin Generators RGX3500

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ՝ ☎ 529353

հաճախակ.	մաքս. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 Կվտ	2.5 Կվտ	7.1 ժ	13 լ
60 Հց	3.5 Կվտ	3.0 Կվտ	6.1 ժ	



ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՔ

ՀԵՂՁ ԳՆԵՐՈՎ

Օրաթերթը զեղչ գներով կարող եք բաժանորդագրվել «Հայմամուլ» գործակալությունում կամ Հայփոստի բաժանմունքներում:

Վեցամսյա բաժանորդագրություն՝ ~~12600~~ 9000 դր.

Եռամսյա բաժանորդագրություն՝ ~~6300~~ 5000 դր.

Ամսական բաժանորդագրություն՝ ~~2100~~ 2000 դր.

ՀԵՌՈՒՏԱՊՐԱԳՐԵՐ

9 հոկտեմբեր

1

17.00 Հայլուր
17.20 3-րդ ալիք
18.00 Հեռուստատեսիալ «Դալլաս»
19.00 Մայրաքաղաք
20.00 Հայլուր
20.30 1 լուր
20.45 Հեռուստակասալոգ
20.50 Երաժշտական պրեմիերա
21.00 3-րդ ալիք
24.00 Հայլուր
00.15 Կեսգիշեր

ՆՈՐՔ

19.00 Լուրեր
19.15 Մուլտֆիլմ
19.25 ԱՐՏ-13. Հիթ շքերթ
19.45 Միասին («Միր»)
20.30 Ճակատագիր
21.00 Լուրեր
21.25 Ասողները հուշում են
21.30 Ներողություն (գեղանկարիչ Սերգեյ Վարդանյան)
21.55 Սիրեցեք զմիմեանս
22.00 ԱՐՏ-13. Ծանոթ-անծանոթը
22.30 «02» լրատու
23.00 Լուրեր
23.10 Թրիլերի ժանրում. գեղֆիլմ «Հախելային արացոլում»

4

19.05 Մամուլի սուրհանդակ
19.15 Մուլտկինոնկար
19.25 Մի անգամ
19.30 «Չորս հարսանիք եւ թաղում» կատակերգությունը
(20.55 Սուրհանդակ)
22.00 Մամուլի սուրհանդակ
22.15 «Մահացու մոլեգնություն» մարտաֆիլմը
(22.55 Սուրհանդակ)
00.00 Արթուր էլբակյանի հեղինակային «Ուրբաթ գիշեր՝ բոլորովին ոչ ոքի չունեմ» ծրագիրը. Հանդիպում. Շուշան Պետրոսյան: Գեղֆիլմ. «Մասանին», մաս II (գլխ. դերում՝ Նաստասիա Կինսկի) էրոտիկ ֆիլմ. «Սեխից խոնջացածները»
(00.55, 02.55 Սուրհանդակ)

2

7.00 Բարի լույս
10.00, 16.00, 19.00, 01.40 Նորություններ
10.20 Սերիալ «Դաժան հրեշակը»
11.30-16.00 Բիզնես TV
16.15 Ֆիլմ-հեքիաթ «Ալադինի կախարդական լամպը»
18.00 «Դաժան հրեշակը»
19.20 Ջենթլմեն-շոու
19.50 Նվագիր, հարմոն սիրելի
20.25 Առողջություն
20.55 «Հրաբխների դաշտ»
22.00 Ժամանակ
22.35 Բարի գիշեր, երեխաներ
22.50 Դետեկտիվ «Կարիերայի ծովի գաղտնիքները»
01.10 Նշանավոր մարդկանց կյանքը
02.00 Գ/Ֆ «Խելահեղության երախում»

РТР

8.00 Բարի լույս, Ռուսաստան
10.15 Հերթապահ բաժանմունք
10.30 Բարի լույս, Ռուսաստան
11.00 «Սանտա Բարբարա»
11.45 Երաժշտական աղանդեր
12.00, 15.00, 18.00, 21.00, 00.45 Լուրեր
12.30 Սերիալ «Կոմսուհի դը Մոնսորո»
13.25 Հին բնակարան. 1969 թիվ (2-րդ մաս)
14.45 Հազար ու մեկ օր
15.30 Սերիալ «Դինաստիա-2. Քոլբի ընտանիքը»
16.15 Երկխոսություններ կենդանիների մասին
17.15 «Զանգահարեք կուզային»
17.30 Սերիալ «Առաջին համբույրներ»
18.30 Աշտարակ
18.55 Դետեկտիվ «Մարդասպանի ձեռքը» (Անգլիա)
20.30 «Մայրենի ռոճյա»
21.30 Մանրամասներ
21.45 «Անբլազ» եւ ընկ.
22.45 Ե. Սվետլանովի հոբելյանին
01.15 Հերթապահ բաժանմունք

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) * տեղեկագրերով * մագնիսական սկավառակներով * INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 922 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 8. 10. 1998 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@